1893 ՅՈՒՆԻՍԻ 27 (9 Յուլ.), ԿԻՐԱԿԻ

№ 73—ՏԱՍՆԵՒԵՐԿՈՒԵՐՈՐԴ ՏԱՐԻ—№ 73

ԿԻՐԱԿԻ, ՅՈՒՆԻՍԻ 27 (9 Յուլ.) 1893

ԱՐՁԱԳԱՆՔ

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

Հրատարակվում է չորեքշաբթի, ուրբաթ և կիրակի օրերը։

Տարեկան գինն է 10 ռուբլի, կէս տարուանը 6 ռուբլի, 3 ամսուանը 3 ռ. և մի ամսուանը 1 ռ.։ Առանձին համարը 7 կոպէկ։

Բաժանորդագրութիւնն ընդունվում է խմբագրատանը և կենդրոնական գրավաճառանոցում։

Հասցէն՝ Тифлисъ, Редакція „Ардзагангъ".
կամ՝ Tiflis, Rédaction „Ardzagang".

Խմբագրութիւնը բաց է ամենայն օր 10—1 ժամը (բացի կիրակի և տօն օրերից)։

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ԲԱՑՈՒԱԾ Է ԿԷՍ ՏԱՐՈՒԱՅ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

„ԱՐՁԱԳԱՆՔ"

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳՐԻ

ՅՈՒԼԻՍԻ 1-ԻՑ ՄԻՆՉԵՒ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-Ը ՊԷՏՔ Է ՎՃԱՐԵԼ 6 Ռ.

Բաժանորդագրութիւնն ընդունվում է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ (Երեւանեան հրապարակի և Միջի-փողոցի անկիւն քաղաքային տան հանդէպ) և ԿԵՆԴՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՈՒՄ։

Օտարաքաղաքացիք պէտք է դիմեն՝ Тифлисъ, Редакція „Ардзагангъ„. իսկ արտասահմանից՝ Tiflis, Rédaction du journal arménien «Ardzagang»։

Յայտարարութիւններ ընդունվում են հայերէն և օտար լեզուներով։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Վեհափառ հայրապետի ուղևորութիւնը։

Վեհափառ կաթողիկոսի հաստատութեան մասին։

Կաթոլիկ եկեղեցական վարչութեան նոր օրէնք։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. — ԳԵՐ. ՍԱՐԳԻՍ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ՆԱՄԱԿԸ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ. Կ. Պոլսից։ Կարսից։ Կարապետ Եզեան։ Թագաւոր-Կայսեր հրամանը։ Բագուայ նահանգի ազգաբնակութիւնը։ Լիս գիւղի եկեղեցու շինութիւնը։ Պաշտ. տեղեկ. խօլերայի մասին։ Սիմֆերոպոլից։ հայ թատրոնական մասնաժողովի և բեմի համակրողների նիստ։

ՖԷԼԻԵՏՕՆ.—Հայրիկ։ Նորընտիր կաթողիկոսների ուղևորութիւնը դէպի Ս. Էջմիածին և ռուսաց տէրութեան մատուցած յարգանքները։

ԲՆԱՍԻՐԱԿԱՆ. — Տեսակցութիւն պրոֆ. Մաքս Միլլերի հետ։

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՈՒՂԵՒՈՐՈՒԹԻՒՆԸ

Երէկ, ամսոյս 26-ին, Թիֆլիզից ճանապարհ ընկան դէպի Բաթում Ս. Էջմիածնի հրաւիրակները։ Սոքա էին գեր. Սարգիս և Արիստակէս Սեդրաքեան եպիսկոպոսները և երկու բարեշնորհ աբեղայք՝ Եփրեմ և Մեսրովբ, որոնց Ս. Էջմիածնի սինոդն ուղարկում է Երուսաղէմ, Նորին Վեհափառութեան ամենայն Հայոց Մկրտիչ Հայրապետին ուղեկցելու դէպի Էջմիածին՝ մեր Մայր Աթոռը։ Սոցա հետ են և երկու շաթիրներ։ Հրաւիրակները տանում են իրանց հետ և Հայրապետական հովուական ցուպն ու խաչը։

Հրաւիրակները Բաթումից կը նաւեն երկու շաբթի և Կ. Պոլսում կը մնան մի քանի օր, թէ Կ. Պոլսի ամենապատիւ պատրիարք հօր և թէ ռուսաց դեսպանին ներկայանալու և ապա ուղղակի կ'երթան Յոպպէի վրայով Երուսաղէմ։ Հրաւիրակների Երուսաղէմ հասնելու երրորդ օրը Վեհափառ Հայրապետը Ս. Էջմիածնի հրաւիրակների և Երուսաղէմի Ս. Յակոբեանց վանքի աւագ լուսարար գեր. Սահակ եպիսկոպոսի ու մի վարդապետի ուղեկցութեամբ կը թողնէ Ս. Երուսաղէմը ու կը ճանապարհէ դէպի Թրիեստ, Վիեննա, Օդեսա, Բաթում, Թիֆլիզ, Երևան և Էջմիածին։ Ըստ կարգադրութեան գեր. տեղապահի Նորին Վեհափառութեանը կը դիմաւորեն Օդեսայում Բեսարաբիայի և Նոր-Նախիջևանի վիճակի կառավարիչ գեր. Գրիգոր եպիսկոպոս Աղափիրեանցը և Աստրախանի առաջնորդ գեր. Գէորգ եպիս. Սուրէնեանցը, իսկ Թիֆլիզում Նորին Վեհափառութեան ընդունելութեան համար ներկայ կը լինին Շամախու առաջնորդ գեր. Մեսրովբ արքեպիսկոպոս Սմբատեանցը ու Ղարաբաղի առաջնորդ գեր. Կարապետ եպիսկոպոս Այվազեանցը, որոնց հրամայած է իւր ժամանակին գտնուելու Թիֆլիզում։ Նորին Վեհափառութեան Թիֆլիզ ժամանումը կը լինի հաւանականօրէն յուլիսի վերջերին կամ օգոստոսի սկզբում։

ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՀԱՍՏԱՏՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

(Երուսաղէմից «Նոր-Դարին» ուղարկուած թղթակցութիւնը)

Մայիսի 20-ին տեղւոյս ռուսական հիւպատոսը Վեհափառ Կաթողիկոսին ներկայացաւ ըստ հրահանգի ռուսական դեսպանին և յայտնեց, որ Սուլթանն արձակած է Նորին Վեհափառութիւնը հպատակութիւնից և եղած համաձայնութեան վրայ պիտի ճանապարհորդէ ի ս. Էջմիածին Թրիէստի վրայով։

Նոյն տեղեկութիւնը քաղաքիս կառավարիչն ևս հաղորդեց համաձայն եպարքոսական հրամանին։

Փառք Նախախնամութեան, որ վերջապէս, թէև տարիներու ընթացքում, լուծուեցաւ հայոց եկեղեցւոյ Պետին ընտրութեան կնճռոտ և ծանրակշիռ խնդիրը։ Ո՞վ կնճռոտեց. աւելի ծանր խնդիրներ կային, որոնք վաղուց լուծուած են։

Կը լսայինք, որ մի քանի օրից Էջմիածնից պաշտօնապէս կը հաղորդեն Նորին Վեհափառութեան եղած կարգադրութիւնները. սակայն մինչև այսօր ոչ մէկ լուր, թուղթ կամ հեռագիր չստացուեցաւ։ Երուսաղէմի պատրիարքութիւնը Էջմիածնի վարչութեան մէկ գործակալութիւնը չէր, որ նրանից հրահանգի սպասէր իւր ընելիքներուն համար։

Երէկ կաթողիկէ եկեղեցւոյ տօնն էր, և մեծ հանդիսաւորութեամբ կատարուեցաւ Սրբոց Յակոբեանց պատրիարքական Մայր-Տաճարին մէջ։ Վաղօրօք եղած կարգադրութեան համաձայն՝ առաւօտեան ժամերգութեան ատեն, զկնի անդաստանին, հանդուցեալ Կաթողիկոսին համար հանգստեան կարգ կատարուեցաւ, այնուհետև Ս. Պատրիարքը պատշաճաւոր քարոզով մը միաբանութեան և ժողովրդեան աւետեց հայաստանեայց Եկեղեցւոյ Հայրապետին հաստատութիւնը և յետ այսու Նորին Վեհափառութեան անուան յիշատակութեան լինելը 'ի ս. պատարագի։ Պատարագիչն էր Գեր. Մամբրէ եպիսկոպոսն. — «Առաքելոց»-էն զկնի, երբ «Եւս առաւել» ըսաւ Հայրապետի անուան յիշատակութեամբ, ամենու աչքերը ուրախութեան արտասուքով լեցուեցան։

Զկնի պատարագին Միաբանութեան հոգևորական դասը, մեծ ու փոքր, առաջնորդութեամբ լուսարարապետ և փոխանորդ սրբազաններուն, ներկայացաւ Վեհափառ Հայրապետին ի շնորհաւորութիւն Մայր-Աթոռոյ տօնին և այս առթիւ լուսարարապետ գեր. Սահակ եպիսկոպոսը մի քանի համառօտ խօսքերով արտայայտեց Ս. Յակոբեանց միաբանութեան անպատում խինդն ու մխիթարութիւնը, և ջերմագին բարեմաղթութիւնները վասըն անդրդուելի հաստատութեան և յարատևութեան Հայաստանեայց առաքելական Ս. Եկեղեցւոյ և Հայրապետական գահուն և վասն թանկագին կենաց Նորին Վեհափառութեան։ Կարճ յուզեալ Նորին Սրբութիւնը օրհնեց զամենեսեն և արձակեց։

Չմոռնամ յիշել, որ յիշատակութեան կարգադրութիւնը շրջաբերական հրամանագրով հաղորդուեցաւ անմիջապէս Դամասկոսի, Պէրութի, Լաւոդիկեայ, Կիպրոսի, Յոպպէի, Ս. Յարութեան, Ս. Աստուածածնայ տաճարաց և հրեշտակապետի տեսչութեանց։

Հետևեալ բովանդակութեամբ Նորին Վեհափառութիւնը Օսմանեան կայսերական պալատը հեռագրեց մայիս 20-ին.

«Էջմիածնայ Կաթողիկոս ընտրուելուս առթիւ՝ Նորին Կայսերական Վեհափառութեան շնորհած իրաւէին համաձայն՝ մինչ կը պատրաստուիմ մեկնել իմ Հոգևոր Պաշտօնավայրս, չեմ կարող չյիշել այն անբաւ շնորհքները և բարձր համակրանքը, զորս վայելած եմ մինչև ծերութեանս օրերը՝ Օսմանեան բարեյիշատակ գահակալներէն, մանաւանդ Նորին Կայսերական Վեհափառութենէն և անտարբեր մնալ։

«Ի լրումն պարտաւորութեանց հաւատարիմ հպատակութեանս, և ինչպէս անկեղծ սիրոյս, զոր տածած եմ ցմիշտ Նորին Վեհափառութեան և առ իսկական հայրենիքս եղող Օսմանեան երկիրը, փութացի վերակրկնել Ս. Տեղեաց մէջ հանապազօրեայ ջերմագին մաղթանքներս վասն երկարութեան և առողջութեան թանկագին կենաց Նորին Վեհափառութեան և երջանկաւէտ բարգաւաճման Օսմանեան երկրին ընդ խնամարկութեամբ Նորին Մեծութեան։

«Զայս ամենայն՝ հանդերձ խորին մեծարանօք և շնորհակալու զգացմամբ՝ յայտարարել առաջի Գահոյից Նորին Վեհափառութեան՝ պարտք և պատիւ համարիմ անձինս»։

ՀԱՅ-ԿԱԹՈԼԻԿ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ՆՈՐ ՕՐԷՆՔ

Բարձրագոյն իշխանութիւնը հաստատել է պետական խորհրդի հետևեալ որոշումը հայ-կաթոլիկ եկեղեցու կառավարութեան մասին.

1) Հայ-կաթոլիկ եկեղեցու կառավարութիւնը յանձնվում է Տիրասպոլի կաթոլիկ եպիսկոպոսին։ 2) նոյն եկեղեցու գործերի, գոյքի, հոգևորականութեան և հոգևոր ուսումնարանների վերաբերեալ գործավարութիւնը կենդրոնանում է Թիֆլիզի հայ-կաթոլիկ վարչութիւնում։

3) Տիրասպոլի եպիսկոպոսը և Թիֆլիզի հոգևոր վարչութիւնը վերոյիշեալ գործերը վարում են համաձայն հայ-կաթոլիկ եկեղեցու վերաբերեալ տիրող օրէնքների։ իսկ վերջին օրէնքներով չնախատեսած դէպքերում հռովմէական կաթոլիկ եկեղեցու վերաբերեալ պետական օրէնքների համաձայն։

4) Հայ-կաթոլիկ եկեղեցուն պատկանող երիտասարդների համար, որոնք ցանկանան իրանց նուիրել հոգևոր ծառայութեան, Թիֆլիզում գոյութիւն ունի հոգևոր ուսումնարան աստուածաբանական դասընթացով հանդերձ։ Այդ ուսումնարանի կանոնադիրը հաստատում է ներքին գործոց նախարարը համաձայնութիւն կայացնելով լուսաւորութեան նախարարի հետ։

5) Թիֆլիզի հայ-կաթոլիկ վարչութիւնը ունի նախագահ, երկու անդամներ և քարտուղար։ Հոգևոր վարչութեան նախագահ և անդամներ նշանակում և արձակում է Տիրասպոլի եպիսկոպոսը Թիֆլիզի հայ-կաթոլիկ եկեղեցու քահանաներից և ներքին գործոց նախարարի համաձայնութեամբ, իսկ առժամանակ և այլ քահանաներից և Կովկասի գլխաւոր կառավարութեան համաձայնութեամբ։ Քարտուղարին նշանակում և արձակում է ներքին գործոց նախարարը։

11) Հոգևոր վարչութիւնը ներկայացնում է Տիրասպոլի եպիսկոպոսին և Կովկասի գլխաւոր կառավարութեան տարեհաշիւ, իսկ քարտուղարը հաղորդում է նոյնպիսի հաշիւ ամեն ամիս։

12) Հոգևոր վարչութեան բոլոր գործավարութիւնը լինում է ռուսերէն լեզուով։

Հետևեալ գործերը յանձնվում է հայ-կաթոլիկ հոգևոր վարչութեան։

I) Հոգևորականութեան վերաբերեալ գործեր. քահանաների ընտրութիւն.

ՖԷԼԻԵՏՕՆ

ՀԱՅՐԻԿ

> Կռունկ, ուստի՞ կուգաս, ծառայ եմ ձայնիդ,
> Կռունկ, մեր աշխարհէն խաբրիկ մը չունի՞ս։
>
> Ժող. երգ.

Եկաւ վերջապէս Հայոց աշխարհի կռունկը և «խաբրիկ մը» բերաւ մեզ համար։

Ի՞նչ խաբրիկ։

Հայրիկը գալիս է։

Հայրիկը գալիս է, գոչեցին հուժկու ձայնով Հայրիկի կարօտ զաւակները, գոչեցին և թինդ ու դղրդիւն պատեցին սարին ու ձորին, գետին ու ծովին, դաշտին ու անտառին և բնութեան բոլոր տարրերին։

Ամենուրեք տիրեց ընդհանուր բերկրանք, ամենուրեք ընդհանուր ցնծութիւն, ամենուրեք ընդհանուր ուրախութիւն։

Արթնացան նիրհած սրտեր, արթնացաւ քնած հայրենիքն ու բնութիւնը, կենդանացան և նորից փառւեցան անհամար յոյսեր և ամեն տեղ տիրեց խորին ոգևորութիւն։

Ահա մայրը անհուն հրճուանքով, առժամ մոռացած աշխարհի ամեն տեսակ հոգսեր, մայրական խանդով, աւիւնով գրկում, փարում է իւր զաւակին և ուրախ սրտով աւետում նրան. ուրախացի՛ր, իմ սիրուն որդեակ, ուրախացի՛ր, Հայրիկը գալիս է։

Հայրիկը գալիս է, կրկնում է մանուկը և ուրախութեան ճիչ արձակում։

Ահա հազարաւոր պանդուխտ հայեր մոռացած իրանց կարօտակէզ զաւակներն ու ամուսինները, մոռացած իրանց սրտին տիրող թախիծն ու տրտմութիւնը, խնդում են և սրտի խորին բերկրութեամբ, անհոգ մանկան նման ուրախանալով գոչում. Հայրիկը գալիս է։

Հայրիկը գալիս է, արձագանք են տալիս նրան օտար լեռներն ու օտար ձորերը։

Ահա գարիբ մշակը ոտները շարժում է, չզգալով, որ ահագին բեռն է իւր մէջքին, հոգւոյ զուարթութեամբ չզգալով շալակի ծանրութիւնը շտապում է խնդալով Մխօին, Մկօին հաղորդում. Հայրիկը գալիս է։

Հայրիկը՜, գոչում են նրանք և ուրախացած ու բուռն խնդով փարվում, փաղաքշում իրար։

Հայրիկը՜, գոչում են բոլորը՝ և հարուստը և աղքատը և վաճառականը և արհեստաւորը և գիտունը և տգէտը և այն բոլորը, ում սրտին մօտ այս է անունը։

Եկաւ Հայոց կռունկը և այսպիսի «խաբրիկ մը» բերաւ։

Ո՜հ, ի՜նչ անոյշ, ի՜նչ քաղցր խաբրիկ։

Ո՜րքան տենչալի, ո՜րքան ոգեպատար։

Հայրի՜կ, այս անունը մի քընքուշ զարկ է, որ շարժում է մարդու սրտի թելերը և երգել է տալիս տենչանք, սէր, յոյս և հաւատ, որ վառում է նորից խանդ և նորից աւիւն։

Հայրիկը սիրոյ կայծերի մի հընոց է։

Սէր, սէր է կաթկաթում Նրա ամեն մի հայեացքից, ամեն մի շարժուածքից և իբրև տիպար վեհանձն դատաւորի, անհուն բարութեան հետ և բուռն բարկութիւն է ցոլացնում մրրկածուփ ունքերից։

Հայրիկը մի գերբնական բարձրութիւն է, որի առաջ խոնարհվում են և յուզուած կրքեր, և յախուռն թշնամանքներ և խոլական սըրտեր։

Ո՞վ է նա, որ կը ժպրհէ և Հայրիկի սուրբ անուանը մի աննշան ստուեր կը ձգէ։

Նա անշուշտ մի հրեշ է, մի նըզովեալ, մի անիծեալ հրեշ, որի նմանն անպակաս է լինում նոյն իսկ մի փոքր գերդաստանի մէջ։

Նրա անունը զարթեցնում է ամեն նիրհած ու թմրած սիրտ, Նրա անունով երդվում է իւրաքանչիւր աստուածավախ մարդ։

Հայրիկը մի նուիրական անձն է, Որի դէմքին մենք տեսնում ենք Ներսէսների, Սահակների, Գրիգորների և Մեսրոպների սուրբ և պայծառ պատկերները։

Եւ իրաւամբ էր, երբ ազգը պաշտելի Հայրիկին Հայրապետ ընտրեց։

Նա հայերի պետ էր վաղուց, իսկ այսօր պետ է Մեծն Գրիգորիոսի գահի վրայ։

Եւ արդ՝ ծնկաչոք ընկած մաղթենք առ Աստուած և գոչենք անկեղծ սրտով. «Տէր, պահեա զնա ընդ մեզ ընդ երկայն աւուրս ուղիղ վարդապետութեամբ»։

Եկաւ Հայոց աշխարհի կռունկը և այսպիսի «խաբրիկ մը» բերաւ մեզ համար. Հայրիկը գալիս է։

Եկաւ Սիօնի ծիծառը աւետիք տուաւ մեզ, ապա սրմաւ ոստիկը բերանին, թռաւ դէպ Արարատ և տարաւ Էջմիածին։

Եւ ահա՝ Էջմիածնայ սուրբ կամարների տակ, հոգեզմայլ զօղանջը քաղցր սիրոյ մրմունջ է, որ տալիս է Արագածի հովերին, Արաքսայ գետիներին և առաքում իւր տարագիր, ցիր ու ցան զաւակներին։

Ամպրոպի ձայնով թնդում է Մասիսը, մուսաներն ուրախ շարժում են քնարի լարերը և այդ բոլորին ահեղ որոտով արձագանք է տալիս երկինքը։

Բնութիւնն էլ ներդաշնակ հայի ուրախութեան՝ ժպտում, ծիծաղում է ուրախացած։

Ծառերն անուշիկ սօսափիւնով շշշում են խնդութիւն, ծաղիկները խնկահոտ բոյրը փռելով, մեղմիկ եբերմունքով սուլում են ցնծութիւն և Հայաստանի գետերն ու առուները, վճիտ աղբիւրներն ու փտակները կարկաչում են և խինդ ու բերկրանք վշշում։

Եւ ամենուրեք անուշավառ ժպիտը, դալուկ ու կարմրուկ վարդի նըման խաղում են ալ ու թոշնած շըրթունքներին։

Արդ՝ ժամ չէ՞ արդեօք ուրախութեան այս համատարած եթերի տակ թողնել կիրքը, թողնել նախանձը, վայր ձգել կոյր եսամոլութիւնն ու ինքնապաստանութիւնը, ձեռք ձեռքի տալ, սիրտ սրտի, իրար գրկել, իրար համբուրել, անկեղծ և անոյշ զգուանքով գալ մօտենալ իրար և ասել. «մենք եղբայր ենք, մենք արիւնակից ենք». ապա իրար ներումն շնորհել, սէր խոստանալ և այս համազգային ուրախութիւնն իրաւամբ իւր նշանակութեամբ վսեմ աստիճանին հասցնել։

Հայի Հայրիկը չէ սիրում խռոված որդոցը. բայց չէ՞ որ Նրա համար բոլորն էլ հարազատ են, չէ՞ որ Նա խորթ զաւակներ չունի։

Մի՞թէ կարելի է Նրա դէմքը մըռըրկացնել, կարօտամաշ սիրտը տըխրացնել, հոգին սև շղարշով ծածկել։

Օ՜, ո՛չ, մեզ է մեր Հայրիկը, Նա կարօտ է ուրախութեան։

Արդ՝ եթէ ուզում ենք ուրախացնել, ժամանակ է ձեռք ձեռքի տալ, որոմն հանել և յանձնել կրակին, հեռացնել նախանձն ու չար սերմեր տարածող դևերին և ապա.

> «Մէկտեղ յոգնել, մէկտեղ ցանել,
> Մէկտեղ թափել մեր քրտինքներ,
> Ըզհունձ բարեաց յերկինս հանել,
> Որ կեանք առնուն Հայոց դաշտեր.
> Ընդ աստեղօք ի՜նչ կայ սիրուն,
> Քան զանձկալի եղբայր անուն»։

Եւ մէկտեղ գնանք, մէկտեղ մըտնենք մեր պաշտելի, մեր անձկալի Հայրիկի գիրկը և մէկտեղ գոչենք, մէկտեղ ձայն տանք. ընդունիր զաւակներիդ, մաշուած, տոչորուած վարչական գոյքերի վերաբերեալ վէճեր. մետրիքական գրքերի վարելը. Հոգևոր հայ-կաթոլիկ ուսումնարանի կառավարութեան վերահսկողութիւն և այլն։

II) Աշխարհականների վերաբերեալ գործեր. ամուսնութեան խնդիրների (օրինաւոր և ապօրինի ամուսնութիւն, բաժանումն ամուսինների)։ Ծննդական, ամուսնական և մահուան վկայականներ տալը։

III) Խառն (հոգևորականների և աշխարհականների վերաբերեալ) գործեր։ Ապաշխարհանք նշանակելը մարմնաւոր դատարանների կայացրած վճիռների համաձայն։

IV Տնտեսական գործեր։ Վերահսկողութիւն եկեղեցական կալքերի և դրամագլուխների կառավարութեան։ Նոր եկեղեցիներ կառուցանելու համար բարձրագոյն թոյլտուութիւն խնդրելը։ Ծխերի և ծխական ցուցակներ կազմելու վերաբերեալ գործեր։

Անդրկովկասում առանց բարձրագոյն թոյլտուութեան չպիտի նոր եկեղեցի կառուցանուի։

Հոգևոր վարչութեան վճիռների դէմ գանգատ կարելի է տալ Տիրասպոլի եպիսկոպոսին վճռի կայանալուց յետոյ մի ամսուայ ընթացքում։

Պետական գանձարանից և Հռովմէական եկեղեցու առանձին դրամագլխից հետևեալ ռոճիկներն են վճարվում. Հոգևոր վարչութեան նախագահին 800 ռ., անդամներին 500-ական ռ., քարտուղարին 800 ռ., դիւանական ծախքերի համար 500 ռուբլի։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Պ. Խմբագիր.

Սուրբ Էջմիածնի «Արարատ» ամսագրի մայիսի տետրակում՝ թարգմանութեամբ պ. Փ-ի հրատարակած է «Ճանապարհորդութիւն Հայաստանում և Քուրդիստանում»։ Յօդուածի հեղինակն է պ. Վօլդեմար Բելքը, որի ճանապարհորդութեան նպատակն էր Հայաստանի հնութիւններն ու բևեռաձև արձանագրութիւններն ուսումնասիրել։ Գլուխ I «Արարատ» երես 431 կարդում ենք. «Ազնուամիտ Սարգիս եպիսկոպոսը հրաժեշտի ժամանակ տուեց ինձ մի նոր յանձնարարական թուղթ ևս, մինչդեռ նա առաջ ինձ տուել էր մի հովուական ուղղուած [illegible] հայ հոգևորականութեան [illegible]»։ Սրան հետևում է թարգմանչի ծանօթութիւնը. «Մեզ յայտնի է, որ Սարգիս եպիսկոպոս Տէր-Գասպարեանը, տեղապահ չէ եղած, ուստի անբացատրելի է մեզ համար, ինչպէս կարող էր նա յիշեալ կոնդակը տալ»։ Պ. Փ-էն, որ ապրում է մեր մէջ, փոխանակ իւր տարակոյսը լուծելու համար, եթէ ունէր երբէք տարակոյս, անձամբ մեզնից հարցնելու և ստուգելու՝ հրապարակաւ է հարցնում, ուստի մենք ևս հրապարակաւ ենք պատասխանում, թող լսէ.

1891 թուի ամառն էր. վեհափառ Մակար կաթողիկոսի մահուանէն յետոյ, երբ պ. Վօլդեմար Բելքը, յանձնարարութեամբ սրբազան Գրիգոր եպիսկոպոս Աղավնեանցի Ագուլիսից գալով իբրև ճանապարհորդ, և առաջին անգամ մուտք գործելով յԷջմիածին՝ ներկայացաւ ինձ, և և մի քանի օր Էջմիածին մնալով և ըստ արժանւոյն հիւրասիրուելով, ծանօթացաւ բոլոր այն հնութեանց, որոնք պահուած էին թէ ս. Տաճարի մէջ և թէ արտաքոյ Տաճարին, նա հետաքրքրվում էր և ջերմ փափագ էր յայտնում մեր հայրենեաց հնութիւններն ու կիսակործան տաճարների արձանագրութիւնները, ևս և բևեռագիր արձանագրութիւններն ուսումնասիրել. նա խնդրեց իմ միջոցով Երեմիա սրբազան եպիսկոպոսից, որ տեղապահութեան պաշտօն ունէր՝ տալ նրան մի յանձնարարական նամակ Հայաստանի վանահայրց անունով, որպէսզի պատահած միջոցին ընդունեն նրան, և եթէ ունին և գիտեն մի որևէ հնութեան մասին՝ ցոյց տան ի տեղեկութիւն։

Ես նրա խնդիրը մի տոմսակով առաջի արարի նորին սրբազնութեան Երեմիա եպիսկոպոսին, իսկ նա բարեհաճել էր վերադարձնել տոմսակս մակագրութեամբ ինձ ասելով, որ ես իմ կողմանէ տամ այդ խնդրած թուղթը։ Թէև ձեռքիս չունիմ իմ տուած թղթի օրինակը, բայց որքան մտաբերում եմ, այս էր այն թղթի բովանդակութիւնը, որ ես գրեցի և յանձնեցի պ. Բելքին. «Գերմանացի ուսումնական ճանապարհորդ պ. Վօլդեմար Բելքը՝ մեր սիրելի հայրենեաց հնութիւններով հետաքրքրուող մի անձնաւորութիւն է, և կամենում է ուսումնասիրել մեր հայրենիքի յիշատակարանները, վանքերի և կիսակործան տաճարների արձանագրութիւնները. ուստի խնդրեմ բարձրապատիւ վանահայրերից, երբ որ կը հանդիպի իրանց մօտ, նրան յարգանք և սէր ցոյց տալով, յայտնեն եթէ ունին և գիտեն որևէ հնութեան մասին»։ Հայաստանի վանքերը պտտելուց յետոյ՝ երբ կրկին վերադարձաւ Էջմիածին աշնան միջոցին և պատրաստվում էր անցանել Տաճկաստան, նա խնդրեց ինձնից մի յանձնարարական նամակ ևս յանուն Ուչքիլիսայի իմ օծակից եղբայր Յովհաննէս եպ. Տէր-Աստուածատրեանի, և ես սիրով կատարեցի նրա խնդիրը, ըստ որում նա երկնչում էր աւազակաբարոյ քիւրդերից և կարօտում էր ճանապարհորդելի տեղերի բնիկների օգնութեան, մանաւանդ հնութիւններ և բևեռաձև արձանագրութիւններ ուսումնասիրելու գործում։

Արդ՝ մի օտարազգի եւրոպացի ճանապարհորդ՝ ինչպէս է պ. Վօլդեմար Բելքը, կարող էր սխալուել և իմ տուած յանձնարարական թուղթը կոնդակ անուանել. եթէ լիրաւի «Hirtenbrief» բառը պէտք կար այստեղ կոնդակ թարգմանել, և քանի որ թարգմանչի ընդգծած տառերն իմ թղթի բառերը չեն, այլ Վօլդեմար Բելքի, ուրեմն, ինչի է ծառայում գերմաներէնը ևս միասին դնելը. արդեօք միամտաբար չէ կամենում պ. թարգմանիչը հաւատացնել դրանով՝ թէ ես ինձ տեղապահ անուանած լինիմ և կոնդակ տուած. այս երևում է և նրա ծանօթութիւնից. «Մեզ յայտնի է, որ Սարգիս եպիսկոպոս Տէր-Գասպարեանը տեղապահ չէ եղած, ուստի անբացատրելի է մեզ համար, ինչպէս կարող էր նա յիշեալ կոնդակը տալ»։

Պէտք չէ զարմանալ թէ գերմանացի մի ուսումնական ճանապարհորդ չէ կարողացել իմ տուած թղթի կամ յանձնարարական նամակի բուն նշանակութիւնը գտնել և այնպէս անուանել, քանի որ պ. Փ-էն, որ կարծում եմ մի ամի նորընծայ աբեղայ, և ինքը հայ և որ բնակվում է Հայաստանի բուն կենդրոնում, տակաւին անդիտանում է, որ [illegible] չէ կարող [illegible]։

Ուշադրութեան արժանի է և այն կէտը, որ պ. Բելքը հաճել է ինձ Արքեպիսկոպոսական տիտղոսով պատուել, իսկ այս բանը շատ և շատ ծանր է երևացել պ. թարգմանչին, ուստի կամելով կոտակել այդ նուիրական տիտղոսը եպիսկոպոսականին, որ հայոց եկեղեցու հայրապետների կոնդակով յատկապէս տրվում է արժանաւորներին, [illegible] բառը խոշոր տառերով է դուրս բերել (երես 447), կամելով ցոյց տալ, որ ես այդ իրաւունքը չունիմ։

Հայոց եկեղեցական վարչութեան մէջ, որ ես պաշտօն եմ վարում սկսած 1886 թուից, իմ եպիսկոպոսութեան ձեռնադրութեան օրից մինչև այս օրս, ոչ մի տեղ չեն կարող գտնել, ոչ պաշտօնական թղթերի և ոչ առանձնակի նամակների մէջ, որ ես ինքս ինձ անուանած ու ստորագրած լինիմ Արքեպիսկոպոս. ապա ուրեմն սորանով ես ինչ յանցանք գործած կը լինիմ իմ կողման և պատուոյ դէմ՝ երբ օտարք թերևս իրանց ազգային սովորութեան համաձայն և կամ կամելով աւելի պատիւ վերագրել ինձ, այդ տիտղոսով ցանկացած են յարգել զիս։ Այսպիսի օրինակներ շատ կան սինօդի գործերում, նոյն իսկ դիտակ անձինք և այն պաշտօնական թղթերում թէ Տաճկաստանից և թէ Ռուսաստանից որևէ գործի մասին դիմում են սինօդի անդամոց՝ իւրաքանչիւրին Արքեպիսկոպոս պատուած՝ զոր չունին ներկայ անդամներից և ոչ մէկը։ Շատ խնդիրներ կան տեղակալ սրբազանի անունով, որից մակագրութեամբ յանձնուած են սինօդին, որոնց մէջը «Սրբ.» տիտղոսով կամեցել են գնահատել սրբազնութիւնն պատուել, թէև նա ևս չունի այդ տիտղոսը և միթէ որանով պէտք է յանցանք վերագրել սրբազան եպիսկոպոսաց կամ կատակել. ըստ իս ոչ երբէք, քանի որ գրողն իրանք չեն։ Այստեղ անհամատելի, կամ վշտանալու և ցաւելու ոչ մի բան չկայ, ցաւալին միայն այն է, որ «Արարատ» ամսագիրն անգամ այսօք հսկում է միշտ որևէ թեթև առիթ ձեռքից բաց չթողուլ՝ անուանարկելու և անպատւելու Հայ եկեղեցւոյ բարձրաստիճան հոգևորականներին զանազան բարբանջանքներ դնելով նորանց վերայ և աշխատում է արատաւորել նոցա համբաւը։ Այսօր խօսքերս ամենևին կարօտութիւն չունին փաստերի և ապացուցութիւնների, ցանկացողը սոյն տեղեկութիւն ստանալու այս մասին՝ թող բարեհաճեն միանգամ ակնարկել «Արարատ» ամսագրի տետրակները, սկսեալ դեկտեմբեր ամսից 1891 թուի մինչև այս օրերս, և կը տեսնեն թէ որքան ջանք է թափել այդ ամսագիրը (որ Ս. Էջմիածնի միաբանութեան օրգան պէտք էր համարել), սև գոյնով նկարագրել իւրաքանչիւր եպիսկոպոսին բացի մի քանիսից, ինչպէս ահա այս պարզ հանգամանքում, որ մի եւրոպացի ճանապարհորդ միամտութեամբ կամեցել է պատուել Հայ եկեղեցականին երկու բառով, չկարծելով թէ այդ ժանոնց ծանր պիտի թուի և աղմուկ հանի։

Սորա մասին այսքանս բաւական համարելով, դառնանք այժմ մի այլ խնդրի, որ Փ-էն նոյն տետրակի մէջ շօշափում է անտեղաբար. իսկ «Արարատ» ամսագիրը տեղ է տալիս և սիրով ընդունում է իւր էջերի մէջ, այսպէս գրելով.

«Մեզնից դեռ ոչ ոք չէ մոռացել, թէ ինչ մեծ աղմուկ հանեցին մեր եկեղեցւոյ ջատագով և նորա հնաւանդ սովորութեանց աւանդապահ, կարծեցեալ բարեկամները, երբ իմացան, որ հայր Սարգիս Բէգնազարեանը իւր կրօնի դասագրքի համար դիմել է մի քանի օտար աղբիւրների, որոնց նա բարեխղճաբար յիշել էր իւր յառաջաբանի մէջ, և որոնցից թարգմանել է այնպիսի մասեր, որոնք յատուկ են բոլոր քրիստոնէական եկեղեցիներին. և ահա հէնց այդ պատճառով նրա գիրքը հրատարակեցին իբրև հերձուածողական գրութիւն, իսկ հեղինակին հերետիկոս։ Այդ գրքի քննիչներն անկասկած իրաւունք ունէին յատուկ ուշադրութիւն դարձնել գրքի թարգմանած մասերի վրայ, որոնց մէջ հեշտութեամբ կարող էին ներս սպրդած լինել մեր եկեղեցւոյ ոգուն հակառակ մտքեր, եթէ նոքա իրանց քննութեան մէջ արդարութեան սահմանից դուրս եկած չլինէին, և ուղեցոյց չունենային նեղ սահմանափակ կուսակցական հոգին»։

Որովհետև այդ կծու ակնարկը և մեզ երեք եպիսկոպոսներիս է վերաբերում (տես «Արձագանք» 1892 թ. № 127), ուստի պարտք եմ համարում ասել բարեշնորհ Փ-ին. լաւ կը լինէր, որ այժմէն իսկ իրանց գրաշախը պարզէին «Արարատ» ամսագրի հետ միասին և ցոյց տային աշխարհին իրանց դաւանաբանական սկզբունքը։

Մենք չգիտենք, թէ ինչ են կամենում այդ կծու ակնարկով. արդեօք նոքա համակարծիք են Բէգնազարեան քահանայի արտայայտած մտքի հետ, թէ բողոքական ազդեցութեան տակ են խարխափել. ուրեմն պարզենք, թէ ինչ է երեք եպիսկոպոսներիս ասածը, և ինչ է Բէգնազարեան քահանայի արտայայտածը։ Երեք եպիսկոպոսներիս ասածն է, թէ հայոց եկեղեցին դաւանում է 'ի Քրիստոս Յիսուս Փրկիչն մեր անշփոթ և անբաժան միաւորութեամբ մի բնութիւն. իսկ Բէգնազարեանի ասածն է, թէ «Հայոց եկեղեցու ուղիղ դաւանութեան համեմատ կարելի է ասել և՛ մի բնութիւն և՛ երկու բնութիւն ունէր Քրիստոս»։ Երեք եպիսկոպոսներիս ասածն է թէ՝ Սուրբ կոյս Մարիամ Աստուածածին ծնաւ զՓրկիչ աշխարհի կատարեալ Աստուած և կատարեալ մարդ. իսկ Բէգնազարեանի ասածն թէ՝ «Սուրբ կոյս Մարիամ ծնաւ զՔրիստոս [illegible] ըստ մարդկութեան»։ Երեք եպիսկոպոսներիս ասածն է թէ՝ [illegible] բացառական մակբայն այստեղ հերձուածողական միտք է յայտնում, իսկ Բէգնազարեանի ասածն է թէ՝ վերջումն ինքն ասել է թէ՝ Աստուած էր ծնեալն։ Երեք եպիսկոպոսներիս ասածն է թէ՝ ընդհանուր քրիստոնէից եկեղեցիք, այն է՝ արևելեան և արևմտեան, յատկապէս եօթն են ընդունում եկեղեցւոյ խորհուրդները. իսկ Բէգնազարեան քահանան [illegible] է թվում, թէև եօթն է ասել մի ուրիշ տեղ և այլն։ Ահա մեր մի քանի խօսքը Բէգնազարեանի կրօնի դասագրքի մասին, որ կազմում է հայոց եկեղեցու դաւանաբանութիւնն ու ծէսը։

Քանի որ «Արարատի» էջերում սոյն մայիս ամսի 409, 413 երես, հրատարակած է մեր նախնի սուրբ վարդապետաց, եկեղեցւոյ պայծառ ջահերի, ինչպէս է Գրիգոր Տաթևացւոյ և Ստեփաննոսի Սիւնեաց Մետրապօլիտի գրուածները, որոնցից պարզ երևում է, թէ դաւանած են միաւորեալ մի բնութիւն ի Քրիստոս Յիսուս, մեզ անհասկանալի է, թէ ինչ իրաւունքով պ. Փ-ն մեզ անուանում է «կարծեցեալ բարեկամներ հայոց եկեղեցւոյ», իսկ իրանց «Արարատի» խմբագրութեան և Բէգնազարեան քահանային իսկական բարեկամներ։ Այո, այն ժամանակ միայն իրաւունք կ'ունենային մեզ այդպէս անուանելու, երբ բարեհաճէին հերքել մեր գրուածի ճշմարտութիւնը և ցոյց տային, թէ մենք մեր դաւանաբանութեան մէջ սխալ սկզբունք ենք ընտրել. քանի որ այդ չեն արել, ուրեմն այնքան ազնուութիւն ունենալ պէտք է, որ խոստովանէին հրապարակաւ թէ ինքեանք համակարծիք են Բէգնազարեան քահանային, և աւելի նեղ և սահմանափակ ոգւով տոգորուած, որոնց մէջ, այո, փայլում է այդ պարզօրէն։ Որովհետև «Արարատի» խմբագրութիւնը՝ որ իւր կոչման համեմատ պէտք էր օրգան լինել միաբանութեան Էջմիածնի և իւր ոյժը գործ դնէր կրօնի և դաւանութեան պաշտպանութեան համար, այժմ իւր դերը փոխելով՝ դարձել է մի յայտնի կուսակցութեան օրգան ու բերան, արհամարհելով և անարգելով նոյն իսկ իւր միաբանութեան անդամներին, որ ոչ մի բարեկիրթ հաստատութիւններում և վանքերի մէջ չի տեսնուի։ Իսկ երեք եպիսկոպոսներիս նպատակն է եղել ըստ պարտուց պաշտաման զգուշացնել պատուարժան կրօնի դասատուներին չընկնել այդ տեսակ սխալմունքի մէջ, որ չէր կարող ոչ մի կուսակցութեան առիթ համարուել։

Մենք միտք չունինք և չունէինք այս փափուկ խնդրի վերաբերմամբ խօսել և գրել (թէև խօսելու շատ բան ունինք), բայց ստիպուած եղանք այս մի քանի տողերը գրելու մեր պատիւը շօշափած տեսնելով։ Գալով այն խօսքերին, թէ դասագրքի հեղինակին մենք անուանած ենք «հերետիկոս» և հեղինակութիւնը՝ «հերձուածողական», վստահանում ենք ասել, որ ոչ թէ մենք ենք անուանում, այլ Հայաստանեայց եկեղեցին է այդպէս անուանում. չենք սխալուիլ, եթէ ասենք որ՝ բարեշնորհ Փ-ն ձեռնադրուելուց յետոյ քառասնից մէջ է գրել այդ տողերը, և ինչպէս այդքան վաղ մոռացաւ ձեռ-

---

զաւակներից, օրհնիր, պահպանիր մեզ, ով մեր սիրելի, մեր պաշտելի ՀԱՅՐԻ՛Կ։

ԱՐՇԱԿ ԹՈՒՄԱՆԵԱՆ

ՆՈՐԸՆՏԻՐ ԿԱԹՈՂԻԿՈՍՆԵՐԻ ՈՒՂԵՒՈՐՈՒԹԻՒՆԸ ԴԷՊԻ Ս. ԷՋՄԻԱԾԻՆ ԵՒ ՌՈՒՍԱՑ ՏԷՐՈՒԹԵԱՆ ՄԱՏՈՒՑԱԾ ՅԱՐԳԱՆՔՆԵՐԸ *)

(Պատմական տեսութիւն ներկայ դարուս վերաբերութեամբ)։

ԴԱՆԻԷԼ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԲԱՅԱԶԷՏՑԻ (1801—1809 թ.)

Պարսից թագաժառանգ Աբբաս-Միրզան յայտնի էր նաև որպէս քաղաքագէտ անձն. Արձակելով Դանիէլին և բազմեցնելով նորան Էջմիածնական Աթոռում, շահզադէն միտք ունէր կարևոր դէպքերում քաղաքական յանձնարարութիւններ տալ հայրապետիս, հաւատացած լինելով, որ սորա միջնորդութիւնը սիրով կ'ընդունեն ռուսները։ Պետերբուրգի արքունիքն էլ պատուիրած էր Կովկասի կառավարչապետին օգուտ քաղել հայոց կաթողիկոսի այն ազդեցութիւնից, որ նա կարող է ունենալ պարսից պետական անձանց վրայ. Այդպէս ահա Դանիէլի կաթողիկոսութիւնը Էջմիածնի գահակալին մի քաղաքական միջնորդի նշանակութիւն էր տալիս երկու տէրութեանց աչքում. Վերջին դարերի վերաբերութեամբ հայոց կաթողիկոսի այդպիսի դիրք բռնելը նոր էր ու չտեսնուած.

Ռուսաց տէրութիւնը հաճութիւն զգաց իմանալով Դանիէլի փառքով ու պատուով հաստատուիլը Էջմիածնում. Եւ որպէսզի հայրապետի քաղաքական նշանակութիւնն աւելի բարձրանայ պարսից աչքում, կայսրը առանձին հրովարտակով շնորհեց Դանիէլին Ս. Աննայի առաջին աստիճանի շքանշանը հանդերձ ժապաւէնով և աստղով. Այս առաջին օրինակն էր, որ Ռուսիոյ ինքնակալը Էջմիածնի կաթողիկոսին, այն էլ՝ սորա պարսից երկրում գտնուած ժամանակ, շքանշան էր շնորհում *).

Յառաջ ենք բերում մեզ մօտ եղած Դանիէլի այս առթիւ գրած նամակը կոմս Գուդովիչին 1808 թուի օգոստոսին. «Նշան առաջներորդ աստիճանի սրբոյ Աննայի և ճաճանչաձեւ աստղ հանդերձ ամենաողորմած պարգևագրով Ն. Կ. Մ.'ի 30 ապրիլի սոյնոյ ամի, ընդ նամակաց արտաքին իրակութեանց նախարար տեառն գրաֆ Ռումեանցովի և ձերոյ պայծառափայլութեան, ժամանեցին առ մեզ ի 12 յուլիսի, որոց ընդ առաջ ելեալ եկեղեցական հանդիսիւ՝ բազմութեամբ հոգևորականաց և մարմնաւորականաց, երգօք հոգևորօք և հնչեցուցմամբ զանգակաց, մուծաք 'ի Քրիստոսաշէջն Տաճար Տեառն՝ 'ի սուրբ Էջմիածին և առաջի ահեղահրաշ բեմի Իջման սուրբ և տեղւոյն մատուցեալ զամենաջերմեռանդ երկրպագութիւնս թագաւորին թագաւորաց՝ Աստուծոյ երկնաւորի խնդրեցաք զերկարութիւն անդին կենաց Ն. Կ. Մ. և զհաստատութիւն ամենաողորմած աթոռոյ բարերար կայսերութեան ամենայն ռուսաց և մեծաձայն ամենեքին անպատում զուարճութեամբ և լիաբերան շնորհակալութեամբ օրհնելով զամենաբարերար կայսրն և զթագաւորն մեր և զբոլոր պալատն հանդերձ զօրօք և զօրապետօք, ընկալաք ի գլուխ իւրս մեր որպէս զպարգեւս երկնաւորս և կրեսցաք ըստ օրինի զաւուրս երկուս։ Յերբորդում աւուր առաքեցաք զկավալերն և զաստղն առ բարեբարոյ իշխողն երկրիս՝, Հուսէյին խան սպարապետն զօրաց պարսից, և նա խորհուրդ ետ մեզ ոչ կրել զայնս մինչև յայտնեսցէ մեծ իշխողին կողմանցս՝ խոհական Աբբաս Միրզայ շահզադային, և այնպէս գրեաց ինքն և յայտնեաց, և ընկալեալ զհաճութիւն նորա հանդերձ ուրախութեամբ առ նոյնս, ծանոյց մեզ և հրամայեաց կրել համարձակապէս, ըստ որոյ և մեք կրեմք և կրեսցուք անլռելի ձայնիւ սաղմոսելով միշտ առ Աստուած՝ «Տէր կեցո՛ զբարեբարն մեր զամենողորմած կայսրն ամենայն ռուսաց և լուր մեզ յաւուր յորում կարդասցուք առ Քեզ» և այլն»։

Չնայելով այս ուրախութեանը, Դանիէլը զգում էր, որ իւր օրերը հաշուած են և վախճանը մօտեցած։ Նոյնը տեսնում էին և զգում նրա չրջապատողները։ Թէ ծերունի հայրապետի և թէ իւր բարեկամաց մտատանջութեան առարկայն էր դարձել այն միտքը՝ թէ ով պիտի լինի յաջորդը։ Ամենքը վախում էին, որ դարձեալ գլուխ պիտի բարձրացնէ Դաւիթը, որպէս արդէն օծուած կաթողիկոս, և ի հարկէ, իւր առաջին գործը պիտի լինէ վրէժխնդիր լինել Դանիէլականներին, որոնք դեռ երեկուայ օրը ծաղրով և նախատանքով խուզեցին նրա մօրուքը։ Հարկ էր սարսափելի վտանգի առաջնառնելու վաղօրօք հնար գտնել։ Այդ հնարքն էր շուտով բերել տալ Ռուսաս-

---

*) Տես «Արձագանք» № 72.

*) Պէտք է ասել, որ մինչև Պաւլ կայսեր միջամտութիւնը հայոց կաթողիկոսական ընտրութեան գործում և Յովսէփին հաստատութեան հրովարտակ տալը, մեր հայրապետները առաջ էլ ստացած ունէին ռուսաց ինքնակալներից հրովարտակներ. Այդպէս ահա Մեծն Պետրոս 1724. և Կատարինէ Բ. թագուհին 1726 թուին սիրոյ և հովանաւորութեան հրովարտակներ ուղարկեցին Աղուանից Եսայի և Ներսէս կաթողիկոսներին. Իսկ Էջմիածնի գահակալներից Սիմէօնը առաջինը եղաւ 1768 թուին Մեծն Կատարինէից հրովարտակ ստանալով, որով Մայր Աթոռի անմիջական իրաւասութիւնը տարածվում էր Ռուսաստանի հայոց վրայ. Նոյնը յանուն Ղուկաս կաթողիկոսի կրկնեց Պաւլ կայսրը 1798 թուին. Այնուհետև՝ Յովսէփ արհին առաջինն էր, որ իւր կաթողիկոսական հաստատութեան համար 1800 թուին հրովարտակ ստացաւ Ռուսիոյ ինքնակալից. Նոյն տեսակ երկրորդ օրինակը 1802 թուին շնորհուեցաւ Դանիէլին. Սակայն այդ բոլոր վերոյիշեալ դէպքերում Ռուսիոյ կայսրերը բաւականանում էին հրովարտակների հետ միմիայն զանազան իրեղէններ պարգև ուղարկելով. Եւ ահա մինչև Դանիէլին 1808 թ. Ս. Աննայի շքանշան տալը ոչ մէկ կաթողիկոսի այդպիսի պատիւ չէին շնորհած.

Հարկ է յիշել, որ հայոց հոգևորականներից առաջինը, որ արժանացաւ հիւսիսային ինքնակալներից պատւանշաններ ստանալու, եղաւ նոյն Յովսէփ արհին դեռ ևս իւր առաջնորդութեան ժամանակ. Մեծն Կատարինէն, որ առանձին ողորմածութեամբ էր նայում Յովսէփի գործունէութեան վրայ, յատուկ գութ ունէր դէպի արհին և ամեն նշանաւոր դէպքերում առատ վարձատրում էր սորան. Բացի դրամով և կալուածքներով ստացած պարգևներից, Յովսէփը զանազան ժամանակ վարձատրուեցաւ շքեղ պնակէով, վեղարի վրայ ալմաստէ խաչով և յետոյ Ս. Աննայի շքանշանով (առանց աստղի և ալմաստեղէն պարգևանքի). Մէկ անգամ էլ, երբ Պետերբուրգում Յովսէփը ներկայացաւ Կատարինէին, կայսերուհին յայտնեց արքեպիսկոպոսին, որ շնորհում է իրան մանտիա (քղամիդ) անուանեալ յունաց արքեպիսկոպոսների և միտրոպոլիտների կիսափիլոն կիսաշուրջառը և ցանկանում է վաղը նորից տեսնել իրան այդ հոգևորական պատմուճանով. Յովսէփը մնաց շփոթուած, որովհետև անկարելի էր մի օրում պատրաստել տալ մանտիա. Արհին վեծ մտատանջութեան մէջ էր, երբ Պետերբուրգի ռուսաց միտրոպոլիտը, լսելով այդ, ուղարկեց Յովսէփին իւր մանտիան և խնդրեց որ սորանով ներկայանայ կայսրուհուն. Միւս օրը, երբ նշանակած ժամին, Յովսէփը յունական մանտիայով ներկայանում է Կատարինէին, դշխոյն քաղցր ժպիտով նկատում է, թէ ինքը գիտէ—ումնից է արհին փոխ առել այդ պատմուճանը. Յովսէփը մանրամասն նկարագրում է այս իրողութիւնը իւր, մեզ մօտ գտնուած, նամակներում և պատմում է թէ ինչպէս միտրոպոլիտի լուութիւնը շտապել է վճարել թանկագին ընծաներով. Նոյն Յովսէփ արհին ստանալով իւր կաթողիկոսական հաստատման հրովարտակը, պարգևներ և պատիւներ, սպասում էր արժանանալ և աւելի բարձրագոյն շքանշանի, բայց այդ շնորհքը չեղաւ. Դէպի Էջմիածին ուղևորուելիս կանգ առնելով Հաշտարխանում, արհին գրում էր Պետերբուրգի իւր բարեկամաց, թէ պարսից վրայ աւելի ազդեցութիւն ունենալու համար հարկ է որ գոնէ ունեցած Ս. Աննայի շքանշանը ակնակուռ լինի և բրիլիանտէ աստղ ունենայ կրծքին.

Բայց այդ շնորհն էլ զլացան կատարելու, որովհետև, ինչպէս երևում է, կայսրը մտադիր էր բարձրագոյն շքանշան շնորհել Յովսէփին, երբ սա արդէն Էջմիածին հասած, կ'օծուի և գահի վրայ կը բազմի. Արհւոյն կանխահաս վախճանը թերակատար թողեց նորա բաղձանքը.

Դաւիթ կաթողիկոսը ռուսաց կայսրից ոչ հրովարտակ ստացաւ, ոչ շքանշան. Յետագայ հայրապետների ստացած կայսերական պարգևները կը յիշենք իրանց տեղը։

նայրութեան հանդէպ՝ եպիսկոպոսի հարցման, թէ՝ «Նզովեա զհերձուածողն և զամենայն երկաբնակացն դաս»: Պատաս. «Նզովեմ»:

Սարգիս Եպիսկոպոս:

15 յունիսի 1893 թ.
Ս. Էջմիածին:

⁂

Կ. ՊՈԼՍԻՑ հաղորդում են. «Արժանահաւատ աղբիւրներից տեղեկանում ենք, որ Կ. Պոլսում մի քանի պետութիւնների ներկայացուցիչներ առաջարկութիւն են արել սուլթանին, որ անհրաժեշտ է հայերի վիճակը բարեփոխել և զինուորական ատենի վճիռը, որով մահուան էր դատապարտել վերջին ապստամբութեան մասնակիցներին—մեղմացնել: Ինչպէս ասում են, սուլթանը զիջել է ու Ղուրբան-Բայրամի առաջին օրը հրաման է տուել ներելու գլխաւոր յանցաւորներից մի քանիսին: Լոնդոնում դժգոհ են այդ կարգադրութեամբ, և լորդ Ռօզբերին դիտաւորութիւն ունի պահանջելու, որ տաճկական կառավարութիւնը կատարէ 15 տարի առաջ յանձն առած պարտականութիւնը Հայաստանում բարենորոգութիւններ մտցնելու վերաբերութեամբ»:

⁂

ԿԱՐՍԻՑ մեզ գրում են. «Ամսիս 10 ին, կիւրակի օրը հանդիսաւոր պատարագիչ էր գեր. Նախագահ աբեղան: Երբ պիտի յիշատակուէր Վեհափառի անունը, գերապատիւ պատարագիչ հայրը դարձաւ դէպի ժողովուրդը և հանդիսաւոր կերպով աւետեց, թէ «Այսօր ես ինձ բաղդաւոր եմ համարում աւետելու ձեզ, որ մեր ամենաողորմած կայսրը բարեհաճել է հաստատել 'ի կաթողիկոսութիւն Էջմիածնայ գահի վրայ մեր սիրելի Հայրիկին»: Այս ուրախալի աւետումից յետոյ մի պատշաճաւոր աւետումն ևս արեց, բացատրելով կաթողիկոսական գահի նշանակութիւնը մեր կրօնի և եկեղեցու պաշտպանութեան համար»:

⁂

Թագաւոր կայսրը բարեհաճել է ազգային լուսաւորութեան նախարարութեան դեպարտամենտի փոխ-դիրեկտոր գաղտնի խորհրդական Կարապետ Եզեանին նշանակել ազգային լուսաւորութեան նախարարի խորհրդի անդամ:

⁂

Թագաւոր կայսրը բարեհաճել է բարձրագոյն հրամայել Մակսիմիլեան Ճարլ Ժիւլ Ջումախերին ճանաչել—նիդերլանդական փոխ-հիւպատոս Բագւում:

⁂

ԲԱԳՈՒԻՑ ՆԱՀԱՆԳԻ ԱԶԳԱԲՆԱԿՈՒԹԻՒՆԸ

Վերջին վիճակագրական տեղեկութիւնների համաձայն, որոնք հաւաքուած են ոստիկանութեան ձեռքով, Բագուայ նահանգի բնակիչների թիւը 768,536 հոգի է, որոնցից 424,616 հոգի արական և 343,920 իգական սեռի: Քաղաքներում բնակուողների թիւը 170,726 է, այսինքն ընդհանուր բնակիչների թուի 22$^0/_0$: Բագուայ բնակիչների թիւը—107,761 հոգի է. Շամախինը—22,778, Ղուբայինը—16,138 և Լենքորանինը—10,749:

Նահանգում ամենախիտ ազգաբնակութիւնը ունին Ղուբայի և Լենքորանի գաւառները, ուր մի քառակուսի վերստին ընկնում է 22,4 հոգի, մինչդեռ Ջևադի գաւառում այդ թիւը կազմում է 8,2:

Ըստ դաւանութեան առաջին տեղը բռնում են շիի մահմեդականները, որոնց թիւը հասնում է 385,560 հոգու: Սրա հետևում են սիւննիները, որոնց թիւը—248,063 է. Երրորդ տեղը բռնում են հայ լուսաւորչականները, որոնց թիւը հասնում է—61,816 հոգու, այն է ամբողջ նահանգի ազգաբնակութեան 8,04$^0/_0$: Սրանց հետևում են օրթօդօքսները (37,875 հ.), ռուս աղանդաւորներ (20,997 հ.), հրեաներ (9401 հ.), լութերականներ (3,639 հ.) և կաթոլիկներ (1485 հ.):

⁂

ԼԻՍ ԳԻՒՂԻ ԵԿԵՂԵՑՈՒ ՇԻՆՈՒԹԻՒՆԸ

(Նամակ Խմբագրին)

1885 թ. օգոստոս ամսին անձնական գործով լինելով Տփխիսից 10 վերստ հեռաւորութեան վրայ գտնուած Լիս գիւղում, որի բնակիչները բոլորը հայախօս Ղարաբաղի վիճակի զանազան գիւղերի գաղթականներ են և չնայելով նոյնա նախնեաց բնատուր ջերմեռանդութեանը դէպի եկեղեցին և կրօնը, իրանց շրջակայ հայաբնակ գիւղերով եկեղեցի չունենալով և դուրկ մնացած ամենայն հոգեկան մխիթարութիւններից շատերը մինչև անգամ մոռացել էին երեսը տեառնագրել: Առաջարկութեամբ և խնդրանօք Վրաստանի և Իմերէթի թեմի նախկին առաջնորդ Արիստակէս եպիսկոպոսի ձեռնարկեցինք այդ գիւղում կառուցանել եկեղեցի 1886 թուականին: Կոնսիստորիայից ստացուած ժապաւինեալ մատեանով օգնութեամբ բարեկրօն Ներսէս քահանայի Տէր-Բարսեղեանց և մանաւանդ բժշկապետ Դանիէլ Լիսիցեանի և Յովհաննէս Գուրգինբէկեանի աջակցութեամբ հաւաքեցինք երկու հազար չորս հարիւր ինն ռուբլի երեսուն և ութ կոպէկ, որոնցից 588 ռուբլին Բագու քաղաքում, իսկ 1821 ռուբլի 38 կոպէկը Տփխիսում: Եկեղեցու մակարդակը ձրիապէս նկարեց հայ ճարտարապետ պ. Գրիգորեանցը: Խոշոր նուիրատուութիւնները եղան հետևեալ անձնաւորութիւններից. պ.պ. Առաքել Ծատուրեանից—200 ռուբլի, բժշկապետ Դանիէլ Լիսիցեանից—164 ռուբլի 55 կոպէկ, լիսեցի Պետրոս Յովհաննիսեանցից—100 ռ., այրի Եփեմեայ Տէր-Յովհաննիսեանից—100 ռուբլի, Յովհաննէս Գուրգինբէկեանցից—100 ռուբլի, Կարապետ Խալաչեանից—100 ռուբլի, Գրիգոր Թումայեանից—100 ռուբլի, Առափելեանց եղբայրներից—100 ռուբլի, Միքայէլ Ադամեանից—50 ռ. գինեվաճառների համքարից—53 ռուբլի, Փիթոյեանցի կանտորայից—50 ռուբլի, Աղեքսանդր Արամաքլիսեանից—50 ռուբլի, Թադուէի Բալժանեանից—30 ռուբլի, լիսեցի Յովսէփ Յովհաննիսեանից—25 ռուբլի, Եգոր Յակովլեանից—25 ռուբլի, Գրիգոր Բաղանդուրեանից 25 ռուբլի, Ներսէս Թայիրեանից—25 ռուբ. Պետրոս Դաւիդովից—25 ռուբլի, Յակովբ Մելիքեանից—25 ռուբլի, Գէորգ Տէր-Ասատուրեանից—25 ռուբլի, իշխան Նիկողայոս Արղութեան Երկայնաբազուկից—25 ռուբլի, Յ. Ադամեանից—25 ռուբլի, Ներսէս Ոծարեկեանից—25 ռ., Կոնստանդին Ալիխանեանից—20 ռուբլի, Ներսէս քահանայ Տէր Բարսեղեանից—20 ռուբլի, Յովհաննէս Չիթախեանցից—20 ռուբլի, Դաւիթ Միրիմանեանցից—20 ռուբլի Մարիամ և Նիկողայոս Փրիդոնեանցից—15 ռուբլի, դերձակների համքարից -15ռուբլի, դաբաղների համքարից—15ռ., Նազար Աֆեանից—15 ռուբլի, Արսէն Միրզոյեանից—15 ռուբլի, Ն. Միրզայեանից—15 ռուբլի, Վասիլ Վարդանեանից—15ռուբլի, Բ. Մելիք-Ղարագեօզեանից—15ռուբլի, մի այրուց—10 ռուբլի, Գասպեանից—10ռուբլի, Նիկողայոս Ենիկոլոփովից—10 ռ. Գրիգոր Արիստոմեանից—10 ռուբլի, բժշկապետ Գ. Քուչարեանից—10 ռուբլի, Սողոմոն Յարութիւնեանից—10 ռուբլի, ձկնպանների համքարից—10 ռուբլի 40 կոպէկ, Նազար Նազարեանցից—10 ռուբլի, Ա. Փրիդոնեանցից—10 ռուբլի: մի ոմնից—10 ռուբլի, իշխան Ամատունուց—10 ռ., Պօղոս Պօղոսեանից—10 ռուբլի, Աղայ Մուրադովից—10 ռուբլի, Աղէքսանդր Ջանջուղազովից - 10 ռուբլի, Գ. Ղալամքարեանից—10 ռուբլի, Իսահակ Հայկազեանից—10 ռուբլի, Նինա Ղալամքարեանից—10 ռուբլի, Սալօմէ Անանեանից—10 ռուբլի, Ասատուր Տէր-Յակոբեանից—10 ռուբլի, Գրիգոր Ղարագեօզեանից—10 ռուբլի, Ջումշուդ-բէգ Ջալալեանից—10 ռուբլի, Աւետիս Զիթողցեանից—10 և ճաների համքարից—10 ռուբլի: Բացի այս դրամական օժանդակութեանը նուիրատուութիւններ եղել են և զանազան անձինքներից մանր գումարներով, որոնք նուիրատուների իսկական ստորագրութիւններով մուծուած են ժապաւինեալ մատեանում: Նիւթեղէններով օժանդակել են հետևեալ անձինք. Ռոստոմ Յարութիւնեանցը—2000 աղիւս, պ. Զօրզանեանցը—6000 աղիւս, պ. Խստամանեանցը—1400 աղիւս, պ. Գէորգ Գէորգեանցը—1000 աղիւս, պ. Խիթարաշվիլին—1000 աղիւս, պ. Կիւրեղեանցը—1000 աղիւս և Բագուից պ. Խուբովից եկեղեցու մի դուռը մօտ 200 ռուբլի արժողութեամբ:

Եկեղեցին, որ շինուել է արդէն մինչև կտուրը, ունի $22^1/_2$ արշին երկայնութիւն և 15 արշին լայնութիւն: Հիմքի խորութիւնն է 4 արշին և 5 վերշոկ, հաստատութիւնը $2^1/_4$ արշին. շինուած է քարափի քարով, կրով և Կուր գետից տարուած աւազով: Հիմքից վերև պատերը $3^1/_2$ արշին բարձրութեամբ և $1^1/_2$ արշին լայնութեամբ շինուած են սրբատաշ քարով, որ բերուած է Դիղոմից իշխան Մուխրանսկու կալուածքից, այնուհետև վերևը պատերը շարունակուած են աղիւսով $4^1/_2$ արշին բարձրութեամբ և $1^1/_2$ արշին լայնութեամբ դարձեալ կրով և աւազով: Շինութիւնը կառուցուած է շատ հաստատուն և մաքուր պ. Յովհաննէս Տէր-Մկրտչեանցի անխոնջ հոգացողութիւնով, որ ինձ հետ ընկեր հոգաբարձու է եկեղեցու շինութեան: Թէ որքան ծախք է եղած այս շինութիւնը գլուխ բերելու համար, մենք առայժմ ոչինչ ասելու չենք այստեղ, մինչև որ համաձայն մեր յայտարարութեան, որ տուած ենք Վրաստանի և Իմերէթի թեմի կոնսիստորիային, հոգևոր իշխանութեան կողմից մեր ծախսքով գնացող ճարտարապետը չներկայացնէ իւր գրաւոր վկայութիւնը շինութեան անձամբ տեսնելու և գնահատութեան մասին, որ կը հրատարակենք ամբողջապէս բոլոր ծախսերի հետ միասին, որպէսզի մեր ծախսերում ցուցանելի թուերը չլինին մեռեալ թուանշաններ: Առայժմ այսքանը կասենք, որ մեր ձեռքին հաւաքած գումարներից ոչ մի կոպէկ չէ մնացած, որ մինչդեռ ունենանք շինութիւնը վերջացնել, որովհետև ամենայն ժամանակ չենք կարող մեր սեփականութիւնից ծախսել և սպասել մինչև նորից՝ ժողովարարութիւն անելը: Եկեղեցու աւարտումը կարօտ է մօտաւորապէս հինգ հարիւր յիսուն ռուբլի ծախսքի, որ մեծ բարերարութիւն կը լինէր, եթէ բարի մարդիկ օգնէին, որ շինութիւնը, որի վրայ մեծ աշխատութիւն և հոգացողութիւն է թափուած, մնալով առանց ծածքի՝ չվնասուի:

Պօղոս Քալանթարեանց:

⁂

«Պրավիտելստվեննի վեստնիկը» հաղորդում է հետևեալ պաշտօնական տեղեկութիւնները խոլերայի մասին.

Օրեոլի նահանգում յունիսի 6-ից մինչև 12-ը խոլերայով բռնուել են 17 հոգի և մեռել 9. Տուլայի նահանգում մայիսի 30-ից մինչև յունիսի 12-ը խոլերայով բռնուել են 8 հոգի և մեռել 3:

⁂

ՍԻՄՖԵՐՕՊՕԼԻՑ մեզ գրում են. «Նոր-Նախիջևանի և Բեսարաբիայի կոնսիստորի հրամանով դադարեցրած է քահանայագործութիւնից տեղւոյս Մարտիրոս քահանայ Իւզբաշեանցը անորոշ ժամանակով և գործը յանձնած է սինոդին»:

⁂

Մեզ հաղորդում են, որ յունիսի 30-ին, չորեքշաբթի օրը երեկոյեան 7 ժամին «Իւժնիէ Նօմերա» կոչուած հիւրանոցում տեղի է ունենալու հայ թատրոնական մասնաժողովի և բեմին համակրողների նիստը:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՏԵՍԱԿՑՈՒԹԻՒՆ ՊՐՈՖ. ՄԱՔՍ ՄԻՒԼԼԵՐԻ ՀԵՏ

Օթէլ Ռուայալ, առաջին յարկը, նրբանցքի մը խորը վայելչազարդ սենեկի մը մէջ կը բարեհաճի ընդունել զիս Բրոֆ. Ֆ. Մաքս Միւլլեր, որուն ղրկած եմ Հայրենիքի քարտս:

Օրը տարաժամած է, և մթթոտուն լուսամփոփի մը ներքև լամպարին աղօտ ու հեշտ պայծառութիւնը բատուերներով կը լեցնէ ամբողջ սենեակն, որուն մէջտեղ, շմինէին մօտ կանգնած, կը ընդունի զիս Գ. Բրոֆեսորը, մինչ անդին սեղանի մը առջև, լամպարին մօտ, կը կարդայ կին մը:

Փոխադարձ բարև հոգ: Գ. Բրոֆէսորը կը ներկայացնէ տիկինը:

—Տիկին Մաքս Միւլլեր:

—Հայրենիք օրագրին կողմէ եկած եմ: կ'ըսեմ Գ. Բրոֆէսորին, բարի գալուստ մաղթելու ձեզ: Ձեր անունը սիրելի է մեզ, ու երախտապարտ ենք գիտականին, որ Հայ լեզուին ծագման վրայ այնքան լոյս սփռած է: Մեր լեզու՝ մեր գեղեցկագոյն ժառանգութիւնն է, և անոր վրայ կատարուած ամէն աշխատութիւնք՝ մեր մտքին չափ մեր սրտին մէջ ալ տեղ ունին:

Ինչ խօսիլ գիտնականի մը հետ որ իր անհուն ուսումնասիրութեանց մէջ ընդրկած է նաև մեր լեզուն, եթէ ոչ բուն իսկ Հայ լեզուին վրայ: Հին ու Նոր Հայերէնին բաղդատութեան վրայ կը դառնայ խօսքը:

—Հայերէնով չեմ զբաղած, կ'ըսէ արդէն գիտնականը, ու կարծիք մը չեմ կրնար յայտնել ձեր Հին ու Նոր լեզուներուն առաւելութեանց վրայ: Բայց, ըստ իս, չկայ գրաւոր լեզու մը որ ժամանակին խօսուած չըլլայ: Կը կարծեմ թէ կարող էք Նոր լեզուին համար միշտ փոխառութիւններ ընել հինէն: Տեսէք Յոյները որք հետըզհետէ կը մօտենան իրենց Հին լեզուին: Ի Հնդկաստան, Պէնկալեան նահանգներուն մէջ, պրահմաններն այսօր այնպիսի լեզու մը կը գրեն որ շատ կը մօտենայ Հին Սանսքրիտին: Նոյն իսկ անգլիական մատենագրութեան մէջ, գրողները յաճախ նոր լեզուին մէջ կը փոխադրեն Հին ձևեր, որք յարմար ու գեղեցիկ են: Իրաւ է սակայն որ եթէ կ'ուզէք աւելի շատ հասնիլ ժողովրդին զարգացման, պէտք է իրեն աւելի ծանօթ ու ընտանի լեզուով մը խօսիք իրեն:

—Բացի քերականական հիմնական տարբերութիւններէ, կ'ըսեմ արդոյ բրոֆէսորին, որք այսօր չեն կրնար վերանալ, և բացի սա պարագայէն որ գրաբարը՝ չկրնար համապատասխանել մեր այսօրուան պահանջներուն, ճիշդ ձեր յիշած մտածումն ալ մեծ տեղ ունի արդի լեզուին ընծայուած նախապատուութեան մէջ: Պէտք ունինք կրթութիւնը աւելի շատ ու աւելի շուտ տարածելու ժողովրդին մէջ, ու ատոր համար գործիք ընտրած ենք արդի լեզուն, որ աւելի նպատակայարմար է:

Այս խօսակցութեան միջոցին է որ մեծայարգ գիտնականը կը յիշէ մասնաւորութիւնը մը որ մեզի համար ալ ճիշդ է. անգլիացի ժողովուրդը կը հասկնայ Աստուածաշունչի հին անգլիերէնով թարգմանութիւնը, բայց նոյն ատենուան նոյն լեզուով եղած ուրիշ հեղինակութիւններն ու թարգմանութիւնները ոչ:

Ըսի թէ ֆրանսերէն կը խօսէինք: Բրոֆեսորը ակադեմական ֆրանսերէն մը կը խօսի, հատիկ հատիկ, բառերը փնտռելով, այլ գտնելով ամենէն մինչև ուամենէն բացատրողական ասութիւնները:

Կը համարձակիմ հարցնելու թէ, ալ աս իր աշխատութեանց ընթացքը չը՞ պիտի տանի զինքը նոր ուսումնասիրութեանց՝ հայ լեզուի ծագման վրայ:

—Ոչ, կը պատասխանէ: Հիմա ամբողջ ժամանակս ու աշխատութիւնս նուիրած եմ հնդկերէնին, չորս հազար տարուան մատենագրութիւն մը, անհուն ծով մը ուր մէջ մարդ կը կորսուի: Աշխատութիւնը շատ երկար է, ու մարդկային կեանքը այնքան քիչ: Ու այնչափ բան կայ ընելիք, որ ճշմարիտ ուսումնասիրութիւն մը կատարելու համար պէտք է պզտիկ սահման մը գծել իրեն ու մշակել զայն հիմնովին:

«Բայց, կը շարունակէ, Հայ լեզուին գիրքը ճշդուած է լեզուներու ընտանիքի մէջ: Երկար ատեն կարծուեցաւ թէ հայերէնը պարսկերէնին մէկ այլափոխութիւնն է. բայց հիմնական ու լուրջ ուսումնասիրութիւններ, ինչպէս Հիւպշմանի և այլոց, հաստատած են թէ հայերէնը, արիական լեզուներու շարքին մէջ, ինքնին առանձին ընտանիք մը կը կազմէ, ինչպէս յունարէնը և լատիներէնը: Հայերէնը սանսքրիտէն սերած է, տարակոյս չկայ: Օրինակ մը եթէ կ'ուզէք:

—Եթէ շնորհք ընէք:

—Տեսէք, սանսքրիտի մէջ Բիտըր, որ լատիներէնի մէջ եղած է Բատէր, անգլիերէնի մէջ Ֆաթըր, հայերէնի մէջ հայր…

—Բիտըր և հայր նոյն, կ'ըսեմ առանց կարենալու զսպել զարմացական շարժում մը:

տանի առաջնորդ հեզահոգի և Դաւիթի թշնամի Եփրեմ արքեպիսկոպոսին և անմիջապէս կաթողիկոսացնել նրան: Դանիէլն էլ նոյնն էր ցանկանում, մինչև անգամ երազում էր իւր ձեռքով օծել Եփրեմին ու գահը նրան յանձնելով, ապա հանգիստ փակել աչքերը: Միւսանից և իւր ցանկութիւնը Դանիէլը շտապեց հասցնել Պետերբուրգի գահոյքին, խնդրելով բարեհաճել հաստատել Եփրեմին կաթողիկոս և շտապ ուղարկել նրան Էջմիածին օծուելու: Կանխապէս Աբբաս Միրզայի, պարսից նախարարների և Երևանի սարդարի հաւանութիւնն էլ ձեռք բերին էջմիածնեցիք: Եփրեմի կաթողիկոսութեան մասին միջնորդեցին կայսեր առաջ նաև Լազարեանները:

Զգուշանալով, դեռ Դանիէլի մահը, կայսեր հրամանաւ 1809 թ. յունվարի 29-ին կոմս Սալտիկովը գրեց կոմս Գուդովիչին որ Դանիէլ կաթողիկոսը իւր հիւանդութեան պատճառաւ դիմել է խնդրագրով յանուն կայսեր, որպէս զի կանխապէս և իւր մահից առաջ ու համաձայն ընդհանուր հայ ազգի ցանկութեան, Եփրեմ արքեպիսկոպոսը նշանակուի նրա փոխանորդ այն դիտաւորութեամբ, որ հայրապետի վախճանած օրը այդ նորընտիր կաթողիկոսը անարգելք և առանց ժամանակ կորցնելու բազմի Էջմիածնի գահի վրայ: Նոյն խնդիրը կրկնեց և Լազարեանը:

«Թագաւոր կայսրը, գրում է կոմս Սալտիկովը, հայոց կաթողիկոսների գործի մէջ իւր համար կանոն է շինած՝ ոչ թէ հակառակել ընդհանուր հայ ազգի ցանկութեանը, այլ ջանալ համերաշխ լինել այդ ցանկութեան և վերացնել մինչև այսօր եղած բոլոր տարաձայնութիւնների առիթները: Կայսրը կամենում է, որ հայոց ազգի միաբանութիւնը կաթողիկոսական ընտրութեան մէջ պատճառ լինի նրանց խաղաղութեան և բարեկարգութեան: Այդ պատճառաւ բարձրագոյն հրաման արաւ ինձ ուղարկել ձեզ (կ. Գուդովիչին) 'ի տնօրինութիւն թէ Դանիէլ պատրիարքի և թէ Լազարեանի խնդրագրերը:

«Ձեզ աւելի լաւ են յայտնի այն երկրի (Արարատեան աշխարհի) բոլոր հանգամանքները և աւելորդ կը լինէր երկար բարակ բացատրել ձեզ, որ մեր այդտեղի գործերի կապը (կծիկը) ստիպում է մեզ ուշադրութիւն դարձնել այդպիսի բարձր աստիճանի համար ընտրուող անձնաւորութեան վրայ: Ինքն ըստ ինքեան հասկանալի է, 'ի հարկէ, որ ռուսական արքունիքը կարևոր կերպով պարտաւոր է աւելութիւն տալ այն ընտրելոյն (կանդիդատ, որ հրաւիրուելով ժողովրդի ձայնով, աւելի յայտնի է իւր հաւատարմութեամբ և աջակցութեամբ Ռուսական կայսերութեան շահերին: Այս հիման վրայ Թագաւոր կայսրը քաջ հաւատ ընծայելով ձեզ, յանձնում է այս գործը ձեր տեսութեան, սպասելով ստանալ իւր ժամանակին ձեր կարծիքը: Բայց այն դէպքում, եթէ սոյն միջոցին Դանիէլ կաթողիկոսը արդէն վախճանուեց, հարկ կը լինի անմիջապէս տեղը դնել Ռուսաստանին անձնուէր մի անձը, որպէս զի պարսիկները օգուտ չքաղեն նշանակել իրանց շահերին նուիրուած մի կաթողիկոս, որից առաջուայ պէս անպատճառ կը հետևին կուսակցական բաժանմունքներ և անդադար խառնակութիւններ: Այսպիսի մեզ համար վնասակար հետևանքի առաջը առնելու միտքով, Թագաւոր կայսրը յոյս է դնում ձեր ընտրութեան վրայ, որ համաձայն կը լինի մեր հայրենեաց օգուտներին: Այդ պատճառով կայսրը իրաւունք է տալիս ձեզ, 'ի դէպս Դանիէլի վախճանման, այլ ևս չսպասելով այստեղից բարձրագոյն հրամանների, նշանակել և կանխապէս հաստատել յանուն Ն. Կ. Մ. կաթողիկոսական փոխանորդ այն եպիսկոպոսին, որին, ձեր ընտրութեամբ, աւելի յարմարաւոր էք համարում այդ աստիճանին, աչքի առաջ ունենալով սակայն, որ նա Ռուսաստանին անձնուէր և հայոց ազգին հաճելի անձն լինի: Թագաւոր կայսրը կամենում այս բոլոր նախատեսութիւնները ծանուցանել ձեզ, որպէս զի բոլորովին արձակէ ձեր ձեռքերը (կատարեալ իրաւունք տալ) այն դէպքերում, որ կարող են պատահել: Նորին Մեծութիւնը հեռու չէ մինչև անգամ այն մտքից, որ 'ի դէպս Դանիէլի վախճանման, հաստատելի կաթողիկոսական աստիճանում Դաւիթը, եթէ միայն այս միջոցութեամբ դուք կարող էք յոյս տածել դարձնել դորան մեր կողմը և նորա ազդեցութիւնից պարսկական արքունիքում օգուտ քաղել թէ ներկայ սահմանագծական գործերում և թէ խաղաղութեան դաշինք կապելիս: Ն. Կ. Մ. այս մտադրութիւններից դուք կարող էք նկատել, որ Թագաւոր կայսեր գլխաւոր ցանկութիւնն է որ կաթողիկոսի ընտրութեան մէջ Ռուսաց արքունեաց օգուտը համերաշխ լինի հայոց ազգի ցանկութեան հետ, մնացած բոլորը ձեր տեսութեանը թողնելով»:

Այս գրութեանը կոմս Գուդովիչը 1809 թ. փետրուարի 29 ին պատասխանեց, թէ՝ «Հայոց կաթողիկոս Դանիէլին, իւր շատ հիւանդոտ դրութեան ժամանակ, պարսիկները Էջմիածնի վանքից տարան Երևան, և այնտեղ բերդի պաշարման միջոցում նա վախճանուել է, որի մասին արդէն ես յետոյ իմացայ: Ըստ կտակի, որ թողել է նա Էջմիածնի վանքում, համաձայնութեամբ բոլոր հոգևորականութեան, նա ընտրել է իրան յաջորդ Ռուսաստանի հայոց առաջնորդ Եփրեմ արքեպիսկոպոսին: Այս ընտրութիւնը, որքան ես կարողացայ նկատել, համաձայն է նմանապէս ընդհանուր ցանկութեան հետ այստեղի հայոց ազգի, որ առանձին ակնածութիւն և անձնուիրութիւն է տածում դէպի այդ անձին: Էջմիածնի բոլոր հոգևորականութեան ժողովը, երբ ես զօրքերով Վրաստան վերադառնալիս այդ վանքումն էի, նոյն տեսակ յայտնեց իւր ցանկութիւնը՝ ունենալ կաթողիկոս Եփրեմ արքեպիսկոպոսին և խնդրեց իմ միջնորդութիւնը ամենաողորմած Թագաւոր կայսեր մօտ նորան այդ աստիճանը բարձրացնելու և բարձրագոյն հաստատման համար: Վասնորոյ 'ի նկատի ունենալով Նորա (Եփրեմի) երկարատև բնակութիւնը Ռուսիայում և Ն. Կ. Մ. Նորա վրայ թափած առատ ողորմութիւնները, որոնցով նա բաղդաւորուած է, հաստատուն երաշխաւորութիւններ կարող են համարուիլ, որ նա, 'ի հարկէ, միշտապէս ջերմեռանդ և անձնուէր կը լինի Ռուսիային, և ես կարծում եմ, որ բարձրագոյն հաստատութիւնը Նորա (Եփրեմի) Հայոց կաթողիկոսական աստիճանի մէջ որքան որ կը համապատասխանէ Ռուսիայի շահերին, այնքան էլ հաճելի կը լինի այստեղի Հայոց ազգին և հոգևորականութեանը: Իսկ կաթողիկոսական աստիճանը իրան սեփականացնող Դաւիթին, որպէս յայտնի է, հայոց ազգի մեծ մասը շատ չէ յարգում և չէ համակրում Նրա հալածանքների և Էջմիածնի վանքը աւերելու պատճառով: Նրա (Դաւիթի) անկեղծ անձնուիրութիւնը պարսից շահերին, որ նա շարունակ ցոյց էր տալիս, տեղիք է տալիս կասկածելու որ նա յուսալի լինի և իրաւունք է տալիս կարծելու, որ եթէ նա մինչև անգամ բարձրագոյն կամօք հաստատուի Հայոց կաթողիկոսական աստիճանում, հազիւ թէ ձեռք վեր առնէ Պարսկաստանի հետ ունեցած մտերմական յարաբերութիւններից: Ուրեմն Նորա (Դաւիթի) ընտրութիւնը շատ սակաւ կը համապատասխանէր թէ Ռուսիայի օգուտներին և թէ Հայոց ազգի ցանկութեանը: Այսպէս ահա ամենահպատակօրէն մատուցանելով իմ կարծիքս ձեր ձեռքով Ն. Կ. Մեծութեան, ես թողնում եմ այս հանգամանքը Բարձր. բարեհաճութեան: Պարտք եմ համարում ընդ սմին աւելացնել, որ Պարսկաստանի հետ ունեցած մեր գործերի ներկայ դրութեամբ հարկ է կարծել, որ հազիւ թէ պարսից արքունիքը համաձայնի յօժարութեամբ հաստատելու նորան (Եփրեմին) կաթողիկոս ընդհանուր հայաստանի, քանի որ չեն հաստատուած Պարսկաստանի հետ մեր խաղաղ յարաբերութիւնները: Վերջապէս նոյն իսկ սրբազան Եփրեմի համար վտանգաւոր կը լինի այժմ գնալ Էջմիածին, քանի որ այդ վանքը գտնվում է պարսից ձեռքում: Ընդհակառակը, ես կարծում եմ, մեր գործերի յաջողութեան համար աւելի օգտաւէտ կը լինի, որ մի առ ժամանակ նա մնայ Թիֆլիզում, որտեղից նա աւելի մեծ ազդեցութիւն կ'ունենայ Պարսկաստանում բնակուող ժողովրդի և հոգևորականութեան վրայ, մինչև որ մեր գործերը Պարսկաստանի հետ աւելի յաջող ընթացք կըստանան:

Այսպէս էր պատրաստւում կաթողիկոսական գահը Դանիէլի յաջորդ Եփրեմ արքեպիսկոպոսի համար:

Ալէքսանդր Երիցեանց:

(Կը շարունակուի)

—Այո՛, մի զարմանաք, Բէտէր և Հայր նոյն բառերն են: Կերպարանափոխութիւնը պատահական բան մը չէ, այլ ձայնական որոշ օրէնքներու ազդեցութեամբն է որ եղած է:

—

Բրոֆեսոր Գ. Մաքս Միւլլեր առաջին անգամն է որ Պոլիս կուգայ: Իր որդին այստեղ անգլիական դեսպանատան քարտուղարներէն է, և կերպով մը ինք պատճառ եղած է իր ծնողներուն ուղեւորութեան: Բայց մեծայարգ գիտնականին ճամբորդութեան միակ նպատակն է հանգչիլ քիչ մը իր աշխատութիւններէն, դպրոցականի զուարթ ու խաղաղիկ անդորրութիւն մը վայելել Պոլսոյ կապոյտ ու լուսաւոր երկնքին տակ, խուր պիտի մնայ եօթը ութ շաբաթ:

Գ. Մաքս Միւլլեր շատ համակրական գաղափար մը ունի մեր զարգացման, մեր կրթական գործին վրայ:

(«Հայր.»)

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՖՐԱՆՍԻԱ. *Ներողութեան պահանջ:* Պատգամաւորների ժողովի վերջին նիստում Կամիլլ Դրէյֆուս, Փարիզի պատգամաւորը, առաջարկեց ընդհանուր ներողութեան պահանջ քաղաքական բնաւորութիւն ունեցող յանցանքների և արհեստաւորների գործադուլի համար: Այդ առաջարկութեան պատասխանելով Դիւպիւյին ասաց. «Ես չեմ ժխտում, որ քաղաքական յանցանքների և արհեստաւորների գործադուլի առիթով դատապարտուածների մէջ կան անհրաժեշտութեան բազմաթիւ դժբախտ զոհեր. պատասխանատուութիւնը նոցա համար ամբողջապէս ընկնում է ղեկավարների վրայ, այս դժբախտների համար կեանքը շատ ծանր է, ուստի և նոքա արժանի են կարեկցութեան և հասարակութեան կատարեալ ներողութեան. և պատգամաւորների ժողովը ամեն առանձին դէպքում կարող է նրանց շնորհք անել, որի համար ամեն տարի նրան իրաւունք է տրվում ազգային տօնի նախընթաց օրը: Իսկ աչքի առաջ ունենալով ընդհանուր ընտրութիւնը հարկ չէ օրէնքներ ջնջել, այլ ընդհակառակը պէտք է տալ նրանց հաւատարիմ մնալու ապացոյց: Դրէյֆուսի յարուցած հարցում կարևոր են ողորմածութիւն և շնորհք և չկայ կարիք ներողութեան»:

Այս ճառին Դրէյֆուսը պատասխանեց. «Լինում են ժամանակներ, երբ պէտք է ցաւակցութեան տեղի տալ. կարեկցութեան ձայնին չանսալով կարելի է ժողովուրդը գրգռել դէպի յեղափոխութիւն»:

Պատգամաւորների մեծամասնութիւնը, համաձայն Դիւպիւյի կարծիքին, մերժեց Դրէյֆուսի առաջարկութիւնը (337 ձայն ընդդէմ 115 ձայների): Temps լրագիրը մեկնաբանելով կառավարութեան այս յաղթութիւնը, վերաբերում է այս նախարարութեան հաստատամտութեան և վճռականութեան, որի ապացոյց տուեց նա մերժելով առաջարկութիւնը ներողութեան մասին:

«Այս մեծամասնութիւնը միշտ ապահոված կը լինի կառավարութեան համար, եթէ նա կը խօսէ հաստատամտութեամբ և անկեղծութեամբ և որ գլխաւորն է, եթէ նորա գործողութիւնները միշտ համաձայն կը լինին խօսքերին, որ ըստ երևութին կառավարութիւնն արդէն իրան որոշ կանոն է արել:

—

ՌՈՒՄԻՆԻԱ Յունական «Կ. Պոլիս» լրագրի տեղեկութեամբ Ռումինիայի ազգային լուսաւորութեան նախարարութիւնը վճռել է եկեղեցական գրքերում ի գործ դնել կիրիլլեան տառերի փոխանակ լատինական տառեր:

«ԱՐՁԱԳԱՆՔԻ»
ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԵԱՆ
Յունիսի 25-ից.

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ.— «Նովոստի» լրագիրը հաղորդում է, որ երէկ «ռուսական առևտրական և յանձնարարական բանկի» դրամարկղն ու գործերը կնքել են: Լուր է շրջում, թէ բանկի վարչութեան անդամների դէմ քրէական դատ է բացած, բաժնետէրերն ու պարտատէրերը չեն կարող վնաս կրել, որովհետև կանոնադրութեամբ խորհրդի և վարչութեան անդամները պատասխանատու են ձեռնարկութեանց համար իրանց ամբողջ կայքով: Բօրսայում խօսում էին, որ ելևմտական շրջաններում հարց է յարուցած բանկի գործունէութիւնը նորոգելու մասին, առաւելապէս ցորենի վաճառականութեան վերաբերութեամբ:

«Պետերբ. Վեդ.» լրագիրը լսել է, որ շուտով կը հետևի կարգադրութիւն, որով գիւղատնտեսական բոլոր արտադրութիւնները պիտի վաճառուին կշռքով:

ԲԵՐԼԻՆ.—Boersen-Caurier լրագիրը հաղորդում է, որ Թագաւոր ժառանգը Բեռլին կը ժամանի երեքշաբթի և այստեղ կըմնայ երկու օր:

ՓԱՐԻԶ.—Սենայի նահանգի նահանգապետը երէկ արգելեց քաղաքային խորհրդարան մտնել պատգամաւորներին ու քաղաքային խորհրդի անդամներին, որոնք կամենում էին այնտեղ ժողով կայացնել, յայտնելով որ միայն վերջիններին թոյլ կըտայ խորհրդարանում ժողովուելու: Այս նախարարական կարգադրութեան դէմ բողոքեցին քաղաքային խորհրդի անդամներն ու պատգամաւորները և Փարիզի բնակիչներին ուղղեցին հրաւէր, որով, դատապարտելով ոստիկանութիւնը, յորդորում են ժողովրդին խաղաղ մնալ, որպէս զի առիթ չտրուի խռովութեան (journée-ի): Կիսապաշտօնական հաղորդութեան մէջ ասած է, որ պրեֆեկտը այսպէս է վարուել Դիւպիւյիի պաշտօնական հրահանգների հիման վրայ, Դիւպիւյիի, որ չէ ընդունում, որ մի միջանկեալ իշխանութիւն փոարինէ կառավարութեան: Սօցիալական ժողովի մէջ «Maison du peuple»-ում Մօնմարտրի վրայ մի քանի ատենաբաններ քարոզում էին ընդհանուր գործադուլ անել և խորհուրդ էին տալիս չմասնակցել յուլիսի ²/₁₄-ի տօնախմբութեան, որպէս զի այսպիսով բողոքած լինին աշխատանքի բիրժայի փակման: Matin լրագիրն ասում է, որ 170 սինդիկատներ որոշել են ընդհանուր գործադուլ անելու: Աշխատանքի բիրժայի գործադրական վարչութիւնը յայտագիր ուղղեց մշակներին, որով առաջարկում է նրան խաղաղութիւն պահպանել և խմբուիլ սինդիկատների շուրջը, որոնք ոչ մի արգելքի չնայելով կը մնան անդրդուելի: Փարիզի պատգամաւորներն ու քաղաքային խորհրդի անդամները առաւօտը խորհրդակցում էին «Germinal»»ի խմբագրատանը: Արմատական լրագիրները դատապարտում են աշխատանքի բիրժայի փակումն, ոմանք հաւանութիւն են տալիս այդ կարգադրութեան, միայն մի քանի բացատրութիւններով:

Խմբագիր-Հրատարակիչ՝
ԱԲԳԱՐ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ

(Կուկիա, Վօրօնցովի արձանի հանդէպ)
հիւանդներին ընդունում են ամեն օր, բացի կիւրակի օրերից:

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ՝

Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան (և ատամնացաւի) և վեներական (սիֆիլիս) ցաւերի:

Կ. Մ. ՉԻԿՈՎԱՆԻ—9—10 ժ. աչքի և նեարդային ց.

Դ. Գ. ՐՈՒԴԿՈՎՍԿԻ—10—11 ժ. ներքին, երեխայոց և կանանց ց.

Ի. Փ. ՊՐՕՏԱՍԵՎԻՉ—11¼—12½ ժ. ականջի, կոկորդի և քթի ց.

Մ. Զ. ՔԱՆԱՆԵԱՆ - 12½—1 ժ. մանկաբարձական և կանանց ց.

Ա. Գ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—1—1½ ներքին և երեխայոց ց.

ԵՐԵԿՈՆԵՐԸ՝

Ա. Մ. ՓՈՒՂԻՆԵԱՆ—5—6 ժ. երեխայոց և ներքին ց.

Ի. Վ. ՉԵՊՈՒՐԿՈՎՍԿԻ—5—6 ժ. աչքի և կրծքի ց., քիմիա-խոշորացուցական հետազօտութիւն խխի և մէզի:

Ա. Ա. ԳԱԴՈՄՍԿԻ—6—7 ժ. սիֆիլիսի (նաև մորթու) և վիրաբուժութեան:

Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—7—7½ ժ.

Ի. Ե. ՖՐԱՆՑԻՈՒՍ—7—7¼ ականջի, կոկորդի, քթի և նեարդային ց. (ելեքտրաբուժութիւն և մարզումն):

Վճար 50 կ.: Համախորհրդի (կօնսիլիումի) և օպերացիայի համար առանձին:

Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ Նաւասարդեան:

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

Մարդատար գնացքը Թիֆլիզից Բաթում դուրս է գնում առաւօտեան ժ. 9-ին 30 ր. և Բաթում հասնում է երեկոյեան ժ. 9-ին 45 ր.:

Փոստային գնացքը Թիֆլիզից Բագու դուրս է գնում ցերեկուայ ժ. 1-ին 20 ր. և հասնում է Բագու առաւօտեան 7 ժ. 30 ր.:

Փոստային գնացքը Թիֆլիզից Բաթում դուրս է գնում երեկոյեան ժ. 6-ին 50 ր. և Բաթում հասնում է առաւօտեան ժ. 8-ին 15 ր.:

Մարդատար գնացքը Բաթումից Թիֆլիզ դուրս է գալիս առաւօտեան ժ. 9-ին 45 ր. և Թիֆլիզ հասնում է երեկոյեան ժ. 9-ին 52 ր.:

Փոստային գնացքը Բաթումից Թիֆլիզ դուրս է գնում գիշերուայ ժ. 11-ին 25 ր. և Թիֆլիզ է հասնում ցերեկուայ ժ. 12-ին 25 ր.:

Փոստային գնացքը Բագուից Թիֆլիզ դուրս է գալիս գիշերուայ ժ. 11-ին 10 ր. և Թիֆլիզ հասնում է ցերեկուայ ժ. 5-ին 50 ր.:

Ամառուան գնացքը Թիֆլիզից Միխայլովո դուրս է գնում ճաշից յետոյ 3 ժամին. Միխայլովոյից Թիֆլիզ՝ առաւօտեան 8 ժ, 10 ր. ապրանքա մարդատար գնացքը Թիֆլիզից Գանձակ դուրս է գնում երեկոյեան 9 ժամին 20 ր., իսկ Գանձակից Թիֆլիզ է հասնում առաւօտեան 1 ժ. 30 րոպէին:

ՓՕՍՏԱՅԻՆ ԵՐԹԵՒԵԿՈՒԹԻՒՆԸ ՎՐԱՑ ՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ ՃԱՆԱՊԱՐՀՈՎ

(Մայիսի 1-ից մինչև նոյեմբերի 1 ը)

Թիֆլիզից՝ հինգ հոգու տեղ ունեցող կառքը ուղևորվում է առաւօտեան 7 ժամին, գիշերում է Մլէթի կայարանում, Վլադիկավկազ է հասնում հետևեալ օրը ժամը 7-ին երեկոյեան:

Հինգ հոգու տեղ ունեցող կառքը դարձեալ ուղևորվում է առաւօտեան 9 ժամին, գիշերում է Պասանաուր կայարանում, հասնում է Վլադիկավկազ հետևեալ օրը ժամը 10-ին երեկոյեան:

Վեց հոգու տեղ ունեցող հանրակառքը (օմնիբուս) ուղևորվում է կէսօրից յետոյ ժամը 3-ին և առանց գիշերելու տեղ է հասնում հետևեալ օրը ժամը 7-ին երեկոյեան:

Վեց հոգու տեղ ունեցող հանրակառքը (օմնիբուս) դարձեալ ուղևորվում է ճաշից յետոյ 5 ժամին և առանց գիշերելու հասնում է Վլադիկավկազ հետևեալ օրը 9 ժամին երեկոյեան:

Վլադիկավկազից՝ հինգ հոգու տեղ ունեցող կառքը ուղևորվում է առաւօտեան ժամը 7-ին, գիշերում է Մլէթի կայարանում, Թիֆլիզ է հասնում հետևեալ օրը ժամը 7-ին երեկոյեան:

Հինգ հոգու տեղ ունեցող կառքը դարձեալ ուղարկվում է առաւօտեան ժամը 9-ին, գիշերում է Գուդաուր կայարանում, հասնում է Թիֆլիզ հետևեալ օրը ժամը 9 ին երեկոյեան:

Վեց հոգու տեղ ունեցող հանրակառքը (օմնիբուս) ուղևորվում է կէսօրից յետոյ ժամը 3-ին և առանց գիշերելու հասնում է Թիֆլիզ հետևեալ օրը ժամ 7-ին երեկոյեան:

Վեց հոգու տեղ ունեցող հանրակառքը (օմնիբուս) դարձեալ ուղևորվում է ճաշից յետոյ ժամը 5 ին և առանց գիշերելու հասնում է Թիֆլիզ հետևեալ օրը 8½ ժամին երեկոյեան:

ՌՈՒՍԱՑ ՇՈԳԵՆԱՒԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

—

Ամեն շաբաթ շոգենաւերի երթևեկութիւն Բաթումի, Օդեսայի եւ Կ. Պոլսի միջեւ:

Բաթումից դուրս է գնում.

Շաբաթ օրերը (լոյս կիրակի գիշերուայ 2 ժ.) շրջանառու ընթացքով բոլոր նաւահանգիստները:

Կիրակի օրերը, գիշերուայ ժամը 11½-ին, խուճապ ընթացքով Եալտայի և Սևաստապոլի վրայով:

Երեքշաբթի օրերը լոյս չորեքշաբթի գիշերուայ ժամը 2-ին) շրջանառու ընթացքով բոլոր նաւահանգիստները:

Հինգշաբթի օրերը ցերեկուայ ժամը 12-ին ուղիղ ընթացքով Նովօրոսիյսկի և Կերչի վրայով:

Կ. Պոլիս երկու շաբաթը մէկ անգամ երեկոյեան ժամը 7-ին:

Բաթում է հասնում.

Ուրբաթ օրերը երեկոյեան, շրջանառու ընթացքով բոլոր նաւահանգիստների վրայով:

Ուրբաթ օրերը առաւօտեան, խուճապ ընթացքով Սևաստապոլի վրայով:

Երկուշաբթի օրերը երեկոյեան շրջանառու ընթացքով բոլոր նաւահանգիստների վրայով:

Չորեքշաբթի օրերը առաւօտեան ուղիղ ընթացքով Նովօրոսիյսկի և Կերչի վրայով:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Parfumerie Ganterie
MODES
H. BERLEMONT
COIFFEUR
de S. A, I. le Grand Duc
MICHEL NICOLAÉVITCH

Bonneterie pour hommes. Chapeaux pour dames. Fleurs, plumes. Maroquinerie, ciseaux rasoirs. Cravates, mouchoirs. Brosserie. Parfumerie française et anglaise des premières maisons.

Salon de coiffures pour dames.

Օտարաքաղաքացիների պատուէրները կատարվում են ամենայն ճշդութեամբ:

Берлемонъ, Дворцовая улица.
(91) (100—81)

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ
և վաճառվում է բացառապէս կենդրոնական գրավաճառանոցում
ԻՍ. ՅԱՐՈՒԹՈՒՆԵԱՆՑԻ
ՀԱՅՈՑ ԳԻՐԸ

բաղկացած 400 երեսից և 8 վիմատիպ նկարներով. պսակուած է Սահակ-Մեսրոպեան մրցանակով: Գինն է 1 ռ. 50 կ., ճանապարհի ծախքով 1 ռ. 75 կոպէկ: Գումարով գնողներին զեղջ է լինում:

(Խ) (25—15)

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ
և վաճառվում է կենդրոնական գրավաճառանոցում
Իշխ. Կ. Բէհբութեանցի
ԾՈԽԻ
(Ծխական հողաբաժնութեան կազմակերպութեան մասին) գրքոյկը Օրէնքի քաղուածներով հայերէն և ռուսերէն:
Գինն է 15 կ. գումարով զիջումն:

(Խ) (25—21)

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ
ԱՆԲՈՒՆԻԿ ՎԱՐԴԵՆԻ
ՊԱՏՄԱԿԱՆ ՎԷՊ
ԹԱՐԳՄ. Կ. ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆՑ
Գինն է 50 ԿՈՊ.
Վաճառվում է Թարգմանչի մօտ, Յ. Մարտիրոսեանցի տպարանում; Օտարաքաղաքացիք դիմելու են հետեւեալ հասցեով. Тифлисъ, Типографія И. Мартиросіанца.

Սահակ քահանայ Սահակեանի աշխատութիւններն ստանալ ցանկացողները կարող են դիմել՝ 1) Тифлисъ: армянскому священнику Сааку Саакянцъ, 2) Կենդրոնական գրավաճառանոց:

Չքաւոր հոգեւորականները կարող են խնդրել ձրի ստանալ:

ՍՏՈՐԻՆ ՇՐՋԱՆ	Ան-կազմ Ռ.	Ան-կազմ Կ.	Կազ-մած Ռ.	Կազ-մած Կ.
ՈՒՍՈՒՑՉԱՑ ՀԱՄԱՐ				
1. *Դասագիրք կրօնի* հին-ուխտ	1	75	2	95
2. *Դասագիրք կրօնի* Նոր-ուխտ մասն I	1	—	1	20
3. *Դասագիրք կրօնի* Նոր-ուխտ մասն II տետր. ա.	—	35	—	55
4. *Դասագիրք կրօնի* Նոր-ուխտ մասն II տետր բ. գ.	—	70	—	90
5. *Մի քանի խօսք* հայ կրօնուսոյցներին	—	10	—	22
ԱՇԱԿԵՐՏԱՑ ՀԱՄԱՐ				
6. *Սրբազան պատմութիւն* հին-ուխտ բ. տիպ V տարի	—	40	—	52
7. *Սրբազան պատմութիւն* Նոր-ուխտ բ. տիպ IV տարի	—	40	—	52
8. *Դասատետր կրօնի* բ. տիպ III տարի	—	30	—	42
9. *Դասատետր կրօնի* բ. տիպ II տարի	—	20	—	42
10. *Դասատետր կրօնի* ա. տիպ I տարի	—	15	—	27

Ճանապարհածախսն ինձ վրայ չէ: Ինձ դիմողները կըստանան 20% զիջ.

(93) (10—1)

„ԹԱՏՐՈՆ"
ԳՐԱԿԱՆ եւ ԹԱՏԵՐԱԿԱՆ ՀԱՆԴԷՍ

Առաջիկայ 18⁹³/₉₄ թ. ձմեռուան ընթացքում լոյս կը տեսնէ երկու գիրք բաղկացած 10—14 տպագրական թերթից մեծադիր երեսներով տպագրական երկու սիւնակ:

I-ն գիրքը կը հրատարակուի 1893 թուի նոյեմբերին, II-ը 1894 թուի մարտին:

Երկու գրքի արժէքն է 3 ռ. 30 կ. (հաշուելով և ճանապարհածախսը օտարաքաղաքացիների համար), իսկ իւրաքանչիւր հատորը առանձին 2 ռ. 25 կ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1) Հայկական բեմի ռեպերտուարը (ցուցակ պիեսների):
2) Թատերգութիւններ ինքնուրոյն և թարգմանական, որոնք ներկայացնելու թոյլատրուած են:
3) Մենախօսութիւններ, տեսարաններ և ոտանաւորներ:
4) Օպերաների լիբրետտօ:
5) Ռեժիսսեօրական բաժին, պիեսների ներկայացման եղանակը, հերոսների ցուցումները դեկորացիաների և զգեստների վերաբերմամբ, յօդուածներ գրիմի մասին և գործնական նկատողութիւններ բեմական կառավարիչների համար:
6) Քննադատական յօդուածներ թատրոնական գեղարուեստի և երաժշտութեան մասին:
7) Յօդուածներ թատրոնի և գեղարուեստի այլ ճիւղերի պատմութիւնից, բեմական գործողների կենսագրութիւնները և նրանց կենդանագրերը:
8) Տեղեկութիւններ գեղարուեստական երևելի մասին Ռուսաստանում և արտասահմանում:
9) Մատենախօսութիւն:

Հրատարակիչ՝ ԱՂԷՔՍԱՆԴՐ ԹԱՐԽԱՆԵԱՆ

Դիմել հետևեալ հասցէով՝ Тифлисъ. Александру Тарханянъ.

(84) (5—4)

VI годъ изданія. Продолжается подписка на 1893 г.
а большую политическую, общественную, экономическую и научную еженедѣльную газету

ПРАВДА

и на литературныя ежемѣсячныя „КНИГИ ПРАВДЫ".

„ПРАВДА" органъ національныхъ интересовъ Россіи и Славянъ и культурно-соціальнаго преуспѣянія русскаго народа. *Цѣль изданія*—осуществлять общечеловѣческія идеи правды, добра, знанія и красоты, поддерживать все честное, бороться съ порокомъ и невѣжествомъ. Правда—*настольный органъ* интеллигенціи.

Газета „ПРАВДА".

25 большихъ №№ въ годъ и болѣе 700 оригинальныхъ статей: политическихъ, экономическихъ, юридическихъ, военныхъ, церковныхъ, научныхъ: по философіи, богословію и всѣмъ областямъ знанія, фельетоны и проч.

Книги Правды—12 книгъ

въ годъ въ изящной обложкѣ: романы, повѣсти, новеллы, этюды, разсказы и проч.

Кромѣ того, редакція поставила себѣ задачею, не останавливаясь предъ крупными расходами, ежегодно давать русскихъ и иностранныхъ классиковъ и капитальнѣйшія ученыя произведенія и въ 1893 г. подписчики получатъ:

Соч. имп. *Екатерины II.*
Соч. *Г. Р. Державина.*
Соч. *К. Ѳ. Рылѣева.*
Соч. *Виктора Гюго* 2 т.
Соч. *Вальтера Скотта* 2 тома и наконецъ еще научное сочиненіе знаменитаго ученаго

К. Вольфа—Происхожденіе міра и жители планетъ.

Въ своемъ новомъ трудѣ К. Вольфъ подробно анализируетъ теоріи о происхожденіи міра и жителяхъ планетъ и, наконецъ, излагаетъ собственныя изслѣдованія и выводы.

Сочиненія названныхъ классиковъ составляютъ дорогой и полезный подарокъ, значительно превышающій подписную цѣну, вообще крайне низкую при солидной постановкѣ изданія.

Въ вышедшихъ №№ *газеты много* разныхъ оригинальныхъ статей, а въ *„книгахъ Правды"*—полное собраніе соч. *Рылѣева; В. Гюго*—„Послѣдній день осужденнаго" и „Эсмеральда"; *Вальтеръ-Скотта*—„Квентинъ-Дорвардъ" и проч. проч.

Независимо сего наши подписчики подробно ознакомятся со всѣми чудесами конца XIX вѣка на выставкѣ въ *Чикаго*, куда редакція уже командировала собственнаго корреспондента.

Подписная цѣна съ перес. по Имперіи: на годъ *шесть* рублей, на полгода *четыре* рубля. Новые подписчики получатъ всѣ уже вышедшіе №№.
Адресъ: С.-Петербургъ, Казанская ул., у Казанскаго собора, 11 (парадный подъѣздъ, бель-этажъ).

Издатель-Редакторъ П. Н. Подлигайловъ.

Дозволено цензурою Тифлисъ, 26 Іюня 1893 года. Տպարան Յ. Մարտիրոսեանցի Типографія И. Мартиросіанца. на Орбел. ул. д. № 1—2